

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հնչակեան Քսան Հերոսներու Նահատակութեան Խորհուրդը՝ Երէկ Ու Այսօր

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր 134 հարուստ պատմութեան ընթացքին արձանագրած է անձնագոհութեան ու նուիրումի բազում էջեր՝ Հայ ժողովուրդի ազատագրութեան ու անկախութեան ճանապարհին: Կուսակցութիւնը անցած բազմաթիւ դժուարութիւններու ընդմէջէն, տեսած է հալածանք, բանտ, քարտուր իր կախաղան: Սակայն, ՍԴՀԿ-ի նուիրեալները՝ զինուած գաղափարական ամուր հաւատքով ու անկոտորում կամքով դիմագրաւած են ամէն մարտահրաւեր ու յաճախ իրենց կեանքը զոհաբերած են յանուն ազգային վեհ նպատակներու:

1915 թուականի Յունիս 15-ին, Պոլսոյ Պայագիտ հրապարակին վրայ թրջական պետութեան որոշումով կախաղան բարձրացան Հնչակեան Քսան ռահվիրաներ, որոնք փորձած էին կանխել Հայութեան սպառնացող արհաւիրքը ու ծրագրած էրիտասարդ թուրքերու պարագլուխներուն ահաբեկումը՝ առաջը առնելու համար պատրաստուող Յեղասպանութեան:

Քսանները չկարողացան իրագործել իրենց գաղտնի ծրագիրը ու ենթարկուեցան մոյս դաժան ճակատագրին, որ վիճակուեցաւ ամբողջ Հայ ազգին: Քսանները կախաղանի վրայ իրենց արտասանած վերջին խօսքերով մեզի փոխանցեցին պատգամներ, որոնք յաջորդող սերունդներուն համար դարձան ուղեցոյց ու ներշնչման աղբիւր: «Դուք մեր մարմինները կրնաք կախել, բայց մեր գաղափարը ո՛չ», «Վաղը քսան հազարներ պիտի գան մեր ետեւէն, մեր գործը շարունակելու», «Արեւելքի հորիզոնին դուք մօտալուտ պիտի տեսնէք Հայաստանի արեւածագը», ըսին անոնք ու մարգարեացան Հայ ժողովուրդի ապագան:

Այդ օրերէն ասդին Հնչակեանները ոգեշնչուած Քսաններուն պատգամներով, ամէն տարի սփիւռքի տարածքին կ'ոգեկոչեն անոնց նահատակութեան օրը ու կը վերանորոգեն իրենց ուխտը՝ ծառայելու Ազգին ու Հայրենիքին:

Վերջին տարիներուն Քսաններուն դաւանած ընկերվարական ու համամարդկային գաղափարները հասանելի դարձան նաեւ յառաջադէմ թուրք եւ քուրտ երիտասարդութեան: Թուրքիոյ մէջ

Հայաստանի Նախընտրական Արշաւը Թեւակոխեց Վճռական Հանգրուան Փաշինեանի Քարոզարշաւը Հասաւ Սիւնիք

Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն մնացած է կարճ ժամանակ: Կիրակի, Յունիս 20-ին ժողովուրդը պիտի ուղղուի քուէատուփ կատարելու համար իր ընտրութիւնը՝ մասնակից 26 կուսակցութիւններու եւ կամ դաշինքներու միջեւ:

Մինչ այդ տեղի կ'ունենայ քարոզչական բաւականին աշխուժ արշաւ, որ կ'ընթանայ ազատ պայմաններու տակ, առիթ ընծայելով բոլորին իր խօսքը հասանելի դարձնել քաղաքացիներուն: Միջոցառումը խանգարող երեւոյթ կը մնայ ընդդիմադրութեան կողմէ կաշառք բաժանելու մասին հաղորդումները, որոնք կը ստուգուին իրաւապահ մարմիններուն կողմէ: Այս կապակցութեամբ կան ձերբակալուած թեկնածուներ, որոնք կը փորձէին կաշառքով մոլորեցնել ընտրողներուն:

Հակառակ մասնակիցներու մեծ թիւին, գլխաւոր պայքարը կ'ընթանայ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ երկրի նախկին բռնապետ Ռոպերթ Քոչարեանի միջեւ: Քոչարեանի հանրահաւաքները նուազ բազմամարդ են ու գլխաւորաբար մասնակցութիւն կ'ապահովեն խոշոր գործարարները, որոնք



Սիւնի Փաշինեանի Հանրահաւաքը

իրենց պաշտօնեաններուն կը ստիպեն ներկայ գտնուելու այդ միջոցառումներուն

Ամենէն կազմակերպուած ու մարդաշատ քարոզարշաւը կը տանի Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական Պայմանագիր» իշխող կուսակցութիւնը, որու անդամները կ'այցեւին Հայաստանի տարբեր շրջաններու գիւղերն ու քաղաքները:

Վերջին օրերուն Փաշինեան

Գորիսի մէջ

իր շարասիւնով հասաւ սահմանային Սիւնիքի մարզ, ուր եւս արժանացաւ ժողովրդային մեծ ընդունելութեան՝ հակառակ բոլոր կան-

Շար.ը էջ 5

Պայտըն-Երտողան Հանդիպումին Ցեղասպանութեան Հարցը Չէ Արժարժուած

Միացեալ Նահանգներու նախագահ՝ Ժօ Պայտըն յայտարարած է, որ «դրական եւ արդիւնաւէտ» բանակցութիւններ ունեցած է իր թուրք պաշտօնակից Ռեճեփ Էրտողանի հետ: Երկու երկիրներու ղեկավարները քննարկած են հետագայ գործողութիւններուն վերաբերող շարք մը հարցեր:

«Վստահ եմ, որ մենք իրական առաջընթացի կը հասնինք քարտեւերութեանց մէջ», - ըսած է Պայտըն:

Էրտողան Պրիւքսէլի մէջ ՆԱԹՕ-ի գագաթնաժողովի ծիրէն ներս Յունիս 14-ին ԱՄՆ-ի նախագահին հետ իր բանակցութիւնները որակած է որպէս «արդիւնաւէտ եւ անկեղծ»:

Պրիւքսէլ մեկնելէ առաջ թուրքիոյ նախագահը յայտարարած էր որ, Պայտընի հետ պիտի քննարկէ նաեւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Սակայն, հանդիպումի աւարտին մամուլի ասուլիսի ընթացքին պատասխանելով CNN-Turk-ի լրագրողի հարցին, Էրտողան ժպիտով ըսած է. «Փառք Աստուծոյ բանակցութիւններու ընթացքին այդ հարցը չարժարժուեցաւ»:

Հանդիպումէն առաջ Ամերիկեան աղբիւրները յայտնած էին որ, օրակարգի վրայ է նաեւ Հարաբարի հարցը, սակայն այդ մասին առաջժամ որեւէ տեղեկութիւն չէ հաղորդուած:

ՍԴՀԿ Յայտարարութիւնը Ազգային Ժողովի Արտահերթ Ընտրութիւններուն Կապակցութեամբ

Կը մօտենան Հայաստանի համար ամենավճռորոշ արտահերթ ընտրութիւնները:

Ճակատագրական այս օրերուն, երբ դեռ բաց վերջի պէս կը մնայ ռազմագերիներու հարցը, երբ Ատրպէյճան, մասամբ նաեւ օգտուելով մեր ներքին անհամերաշխութենէն, կը սաստկացնէ իր սահմանային ոտնձգութիւնները, երբ Արցախի կարգավիճակի հարցը տակաւին կը մնայ մշուշոտ եւ երբ երկրէն ներս կը տիրէ քաղաքական անառողջ մթնոլորտ, Հայաստանի քաղաքացին յանձնառու կը դառնայ իր քուէ ուժով ընտրելու երկրի ապագան՝ դէպի առաջ կամ վերադարձ նախկինին:

Այդ առումով, մենք աւելի քան վստահ ենք, որ Հայաստանի քաղաքացին պիտի կայացնէ ճիշդ ընտրութիւն եւ յանուն իր ապագայի պիտի Ազգային Ժողով ուղարկէ այն ուժերը, որոնք հետամուտ կ'ըլլան շարունակելու Հայաստանի ժողովրդավարացման, կաշառակերութեան դէմ պայքարի եւ դատաւարական համակարգի բարեփոխումներու գործընթացը, միաժամանակ բացառելով վերադարձը այն ուժերուն, որոնց երկտասնամեայ իշխանութիւնը բնորոշուեցաւ Հոկտեմբեր 27-ով, Մարտ 1-ով, լայնատարած ընտրակեղծիքներով, կաշառակերութեամբ, պետական գանձի կողոպուտով եւ քրեաօլիկարիքի համակարգի ստեղծումով:

Անշուշտ, այս ընտրութիւններով հայրենիքի դիմագրաւած բազում արտաքին եւ ներքին մարտահրաւերները պիտի չվերանան: Ու թէ արտաքին հարցերու առաջացումը կամ լուծումը միայն մեզմէ կախեալ չէ, սակայն Նոյեմբերէն առ այսօր շարունակուող անհանդուրժողականութեան եւ ատելութեան մթնոլորտի առկայութիւնը բացառապէս մեր պատասխանատուութիւնն է:

Հետեւաբար, կոչ կ'ունդենք բոլոր քաղաքական ուժերուն, ինչպիսին ալ ըլլան ընտրութիւններուն արդիւնքները՝ զերծ մնալ իրավիճակը ալ աւելի սրող եւ ապակայունացնող քայլերէ ու գործողութիւններէ, որոնք միայն կը խոչընդոտեն ներքին համերաշխութեան վերականգնումը:

ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութիւն
 15 Յունիս, 2021

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Քարոզարշալիմ Սիացած Քահանաների՝ Ատելուժեան Քարոզները

ԳԵՂԱՍ ԱԴԵԱՆ

Civic.am-ն արդէն երրորդ օրն է՝ ապարդիւն փորձում է կապ հաստատել Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի տնօրէն Տէր Վահրամ քահանայ Մելիքեանի հետ, եւ մեկնաբանութիւն ստանալ ՀԱԵ-ի որոշ սպասաւորների՝ քաղաքական գործունէութիւն, իսկ աւելի կոնկրետ՝ հակաքարոզութիւն ծաւալելու վերաբերեալ:

Նախ՝ Տէր Վահրամը չի պատասխանում մեր հեռախօսազանգերին, իսկ տեղեկատուական համակարգի աշխատակիցն էլ նշում է, որ Տէր Վահրամը կա՛մ ընդմիջման է, կա՛մ շատ զբաղուած. եւ հարց է առաջանում, թէ ինչո՞ւ է զբաղուած մամուլի հետ կապ պահանջու համար պատասխանատու անձը:

Նշենք, որ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու Գործիքի տարածաշրջանի հոգեւոր հովիւ Տէր Ահարոն քահանայ Մելքումեանը միանալով Ռոբերտ Քոչարեանի «Հայաստան» դաշինքի նախընտրական քարոզարշալիմ՝ Յունիսի 8-ին ատելութեան քարոզով համեմուած քաղաքական ելոյթ էր ունեցել, յայտարարելով. «Այս թուրքերը երբ մտան Հայաստան, առաջին յարձակումը եղաւ մեր հաւատքի, ինքնութեան վրայ»: Եւ նկատի ունենալով Նիկոլ Փաշինեանին, նա ասել էր. «Դեռեւս 2017թ-ին, երբ ես ասում էի, որ էս անհայրենիքին պիտի բերեն իշխանութեան, ոչ մէկը չէիք հաւատում, երբ սկսեց քայլեր թիւնքելու, ասեցի՝ սկսեց դաւադրութիւնը, երբ հասաւ Երեւան, ես կապուեցի Տոնոյեան Դաւիթի հետ, ասեցի սրա հետեւը կրակ եմ տեսնում,

պարկ յագործէք գլխին, տարեք-կորցրէք, քանի Հայաստանը չի կորցրել»:

Քաղաքագէտ Ստրոպա Սաֆարեանը անդրադառնալով քահանայի յայտարարութեանը, իր ֆէյսպուքեան էջում գրել էր. «Չէ, չէ, ինչ պարկ. մոմի փողը վեկալում ես ու այրում խարոյկի վրայ... Ինկվիզիցիայի աղաթով... Այս ինչ ողորմելիութեան ամպ է կապել երկրիս գլխին...»:

Ժուռնալիստների «Ապարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը տարածելով Տէր Ահարոնի յայտարարութիւնը, գրել էր. «Առաջ, որ ընտրակաշառքով հպատակներին քշում էին տեղամասեր, հոգեւորականները լուռ ու հնազանդ էին, յետոյ ազատագրուեցին: Որոշներն էնքան ազատագրուեցին, որ սկսեցին բռնութեան քարոզ ու ճանապարհային քարտէշ գծել: Աժ նախագահի պաշտօնն ինչ է, որ չեն տալիս այս հոգեւոր հօրը...»:

Քաղաքական վերլուծաբան Յակոբ Բաղալեանն էլ իր էջում եզրակացրել է, թէ ընտրութիւններին մասնակցում է 26 կուսակցութիւն եւ մէկ եկեղեցի՝ ի դէմս ՀԱԵ-ի:

ՀԱԵ-ից Տէր Ահարոնը միակը չէ, որ այս օրերին հոգեւոր գործունէութիւն ծաւալելու փոխարէն զբաղուած է ատելութեան քարոզով եւ Ռոբերտ Քոչարեանի դաշինքի փխուղով եւ գործող իշխանութեանը վարկաբեկող յայտարարութիւններ անելով: Երկու օր առաջ Շիրակի Թեմի առաջնորդ Տ. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահանը Գիւմրիում Նիկոլ Փաշինեանի հրաւիրած նախընտրական հաւաքի ընթացքում ուղիղ

եթերով ցոյց էր տալիս, թէ ինչքան մարդ է հաւաքուել՝ դրանով ակնարկելով, թէ իբր քիչ մարդ է եկել իշխանութեան հաւաքին:

Աջապահանը նաեւ քաղաքական հարցադրույններ է տալիս Նիկոլ Փաշինեանի դէմ եւ դրանցից մէկում անդրադառնալով Նիկոլ Փաշինեանի՝ իր տղային բոլոր գերիների դիմաց փոխանակելու պատրաստակամութեանը՝ ասել էր, որ դա ամօթ է եւ հետամնացութիւն:

Իսկ Տէր Շմաւոն քահանայ Դեռնդեանը ռատիոհաղորդման շրջանակներում է զբաղուած իշխանութեանը քննադատելով: Վերջին հաղորդումներից մէկի ընթացքում քահանան ասել էր, թէ Նիկոլ Փաշինեանը աղէտ է եւ պէտք է մարդկանց դա բացատրել:

Դժուար է պատկերացնել, որ կաթոլիկոսը կամ եկեղեցու ղեկավարութիւնը տեղեակ չեն ատելութեան քարոզչութիւնից: Աւելին՝ այսօր տարածած Փաշինեանին ուղղուած դատապարտման մէջ որեւէ խօսք չկայ իրենց քահանաների կողմից ատելութեան եւ քաղաքականութեամբ զբաղուելու մասին: Մի բան յստակ է՝ եկեղեցին այդպիսով աւելի է հեռանում ժողովրդից ու Աստծուց:

Թէ ինչու է Հայ Առաքելական եկեղեցին իր հոգեւոր գործառույթը մոռացած՝ լծուել նախկին իշխանութեան օգտին քարոզչութեանը, թերեւս ակնյայտ է: Հենց Նիկոլ Փաշինեանի իշխանութեան ժամանակ եղան մի շարք աղմկահարուց բացայայտումներ՝ հոգեւոր դասի ղեկավարութեան ապօրինութիւնների մասին, անգամ քրէական գործեր յարուցուեցին: Դրանք հաստատուեցին եկեղեցու ղեկավարու-

թեան՝ քրէաօլիգարխիկ համակարգի մաս լինելու իրողութիւնը:

Յիշեցնենք նաեւ, որ մէկ տարի առաջ Նաւասարդ Արքեպիսկոպոս Կճոյեանին ԱԱԾ-ն մեղադրանք առաջադրեց՝ կապուած Կիպրոսի օֆշորային սկանդալի հետ:

Ըստ ԱԱԾ-ի՝ Կճոյեանը 2010 թուականի ամրանն իր հետ քաւորասանիկական յարաբերութիւնների մէջ գտնուող գործարարի հետ նախնական համաձայնութեամբ, խարդախութեամբ՝ իբրեւ Ափրիկէի մայրցամաքում իրեն պատկանող աղամանդի հանքավայրում 12.000.000 ԱՄՆ տոլար գումարի չափով ներդրում կատարելու, արդիւնահանուած աղամանդի հումքը Հայաստանի Հանրապետութիւնում վերամշակելու եւ վաճառքի հանելու մտացածին պատրուակով, շահագրգռել է ՀՀ ձեռնարկատերերից մէկին յիշեալ ներդրումը կատարելու հարցում, այնուհետեւ ձեռք են բերուել վերջինիս ու նրա մերձակորներին պատկանող առանձնապէս խոշոր չափերի՝ 11.442.068.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողութեամբ, մի շարք անշարժ գոյքեր եւ գրաւադրուել են պանքերից մէկում: Պանքից ստացել են շուրջ 9 միլիոն ԱՄՆ տոլար եւ 361.500.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկային միջոցներ՝ խեղաթիւրելով դրանց ծագման աղբիւրը, տեղաշարժն ու պատկանելութիւնը:

Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարութեանը, թերեւս, սարսափեցում է ՀԱԵ-ն հարկային եւ մասքային դաշտ բերելու հեռանկարը:

«Civic.am» կայքէջ

ԱՄՆ-Ը Վերադառնում է եւ Վերադառնում է 15 Հայ Ռազմագերի. Ռուսաստանի եւ Թուրքիայի դերը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱՆԵԱՆ

Յունիսի 12-ին յայտնի դարձաւ Ատրպէյճանից 15 հայ ռազմագերի վերադարձի մասին, որն ըստ տեղեկութեան, իրականութիւն է դարձել ԱՄՆ ու վրաստանի միջնորդութեամբ: Այդ մասին յայտնել է թէ Ուաշինկթընը եւ թէ Թբիլիսին: Յատկանշական է, որ գերիների վերադարձը տեղի է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Ֆրիդայ Ռիքերի ռեզիդենտի այցից կարճ ժամանակ անց: Ռիքերը Յունիսի 6-ին ժամանել էր ռեզիդենտ՝ Վրաստան, Ատրպէյճան, Հայաստան: Անշուշտ, 15 հայ ռազմագերի վերադարձը չի լուծում մեր ռազմագերիների խնդիրն ընդհանրապէս, որովհետեւ Ատրպէյճանում պահուում է շատ աւելի մեծ թուով ռազմագերի, մի քանի տասնեակ կամ գուցէ մօտ 200, ըստ տարբեր տուեալների: Պարզ չէ ստույգ թիւը, բայց միեւնոյն ժամանակ պարզ է, որ միայն Խճաբերդից գերեզմանում մեր տղաները մի քանի տասնեակ էին: Միեւնոյն ժամանակ, ողջունելի եւ ուրախալի է անգամ մեր մէկ հայրենակցի վերադարձը, յոյսով, որ տեղի կ'ունենայ նաեւ բոլորի վերադարձ: Յամենայն դէպս, այդպիսի դրուագները վկայում են նաեւ, որ կայ աշխատանքի եւ արդիւնքի հնարաւորութիւն: Միեւնոյն ժամանակ վկայում են նաեւ այն, որ

իրավիճակը գտնուում է բաւականին բարդ քաղաքական-դիւանագիտական շերտերի դաշտում:

ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի ռեզիդենտ այցի շրջանակում կայ 15 հայ գերիների վերադարձի յաջողութիւնը, որին մասնակցել է նաեւ վրաստանը: Արդեօ՞ք սրանով ԱՄՆ ցոյց է տալիս, որ ունի ռեզիդենտը իրավիճակի կառավարման բաւականին բարձր ներուժ: Այս հանգամանքը ուշադրութեան է արժանի նրանով, որ դեռեւս Նոյեմբերի 9-ից յետոյ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիքերն էր յայտարարել, որ Նահանգները դիտարկում է կովկասի երեք երկրների հետ աշխատանքի, նրանց միջեւ գործակցութեան ապահովման մօտեցումները, որոնք կ'ապահովեն գործակցութիւնն այդ երկրների ինքնիշխանութեան պահպանումը: Միեւնոյն ժամանակ հարց է առաջանում, թէ ինչպէս են վերաբերելու դրան Ռուսաստանը, Թուրքիան, արդեօ՞ք չեն լինելու «խանդի» տեսարանների, դրանից բխող վտանգներով, երբ Մոսկուան ու Թուրքիան կը փորձեն անել հնարաւորը, որպէսզի թոյլ չտան ԱՄՆ-ին վերադառնալ ռեզիդենտի: Իր հերթին, իրավիճակը անկասկած միարժէք չէ այդպիսի բացարձակ հարցադրումների ու եզրահանգումների համար, որովհետեւ միւս կողմից մենք կարող ենք դիտարկել նաեւ թէ Ռուսաս-

տանի, թէ Թուրքիայի՝ ԱՄՆ հետ աշխատելու հնարաւոր մրցակցութիւնը: Յամենայն դէպս այդ իմաստով ուշադրութեան է արժանի նաեւ մէկ այլ իրողութիւն: Օրեր առաջ տեղի ունեցան հեռախօսազրույցներ՝ ՌԻ նախագահ Պուտինի եւ ԵՊ նախագահ Շարլ Միշելի, ինչպէս նաեւ ՌԻ արտգործնախարար Լաւրովի եւ Գերմանիայի ու Ֆրանսայի արտգործնախարարների միջեւ: Երկու հեռախօսազրույցների մասին պաշտօնական տեղեկութիւններում էլ նշուում էր, որ կողմերը քննարկել են նաեւ արցախեան հարցը: Միաժամանակ, Ուաշինկթընը յայտարարեց, որ Յունիսի 14-ին տեղի ունենալիք Պայտրն-էրտողան հանդիպմանը եւս քննարկուելու է արցախեան հարցը:

Յունիսի 16-ին, ինչպէս յայտնի է, լինելու է Պայտրն-Փութին հանդիպում, որից առաջ Ուաշինկթընը ազդարարել է, որ Փութինին Պայտրնը յստակ հասկացնել է տալու, որ ԱՄՆ վերադառնում է: ԱՄՆ վերադարձել է միարժէք, յայտարարել է Ֆրանսայի նախագահ Մաքրոնը Պայտրնի հետ հանդիպմանը: Մեզ համար անշուշտ կարեւորագոյն խնդիրն է, որ վերադարձել են գերութեան մէջ գտնուող մեր տղաները, եւ, որ ողջ ու առողջ վերադառնան միւսները, որոնք դեռ այնտեղ են: Այդ խնդիրների լուծ-

Շար.ը էջ 6



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՍԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱԶԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Որեւէ Ուժ Պիտի Չկարողանայ Հաւաքել 50 Տոկոսէն Աւելի Չայն»։ Մարուքեան

«Որ ուժը՝ 51 տոկոս հաւաքեց, միւս ուժն ասելու է՝ «կեղծուել էն ընտրութիւնները», ժողովրդին հանելու ա, բերի հրապարակ, ցնցումներ են սկսելու երկրի ներսում, թուրքերն էլ, ժամացոյցին նայելով, սպասում են, տեսնեն դա երբ ա լինելու», - յայտարարեց «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտնոն Մարուքեան՝ այդուհանդերձ վստահութիւն յայտնելով, որ որեւէ ուժ պիտի չկարողանայ հաւաքել 50 տոկոսէն աւելի ձայն:



«Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Էտնոն Մարուքեան

Մարուքեանի խօսքով՝ եթէ մտածող, համերաշխութիւն բերող ուժեր մտնեն խորհրդարան, ապա հնարաւոր կ'ըլլայ պարտադրել ազգային համաձայնութեան կառավարութեան ձեւաւորումը: Այս սենարի պարագային, ԼՀԿ-ն ըսած է, իր յաւակնութիւնները մէկ կողմ կը դնէ եւ վարչապետի թեկնածու չառաջադրէր, միեւնոյն ժամանակ կ'ընդունի բոլոր ուժերէն դուրս վարչապետի այն թեկնածուն, որ համազգային հաստատում կ'ունենայ:

կարծիքով՝ օրհասական իրավիճակի մէջ յայտնուած երկրի մէջ ընդդիմութիւն հարկաւոր չէ՝ գոնէ 3-4 տարի: Ներքին խնդիրները ասուելի են, գտնուք լուծելու միակ ուղին, ըստ անոր, երկրի ներսը համերաշխութիւն վերականգնելն է:

«Ի սկզբանէ ասել ենք՝ ոչ մի ուժի չենք միանալու առանձին վերցրած, որ էր ուժը գայ, էն միւս ուժերին ոչնչացնի: Մենք էր օրակարգում չկանք, կա՛մ բոլոր ուժերով միանում ենք, երկիրն էս վիճակից հանում ենք, կա՛մ դատեղի չի ունենայ եւ տեղի կ'ունենայ երկրորդ փուլ ընտրութիւններ: Էս է մեր օրակարգը: Ես երէկ տեսայ, որ առաջին նախագահը պէտք է կրտսէլ է. իշխանութիւն յիշու են ունենում: Ըստ էութեան, եկէք էս ձեռով ձեւակերպեմ, եթէ էս օրակարգը յաղթում է, Յունիսի 21-ին ընդդիմութիւն չենք ունենալու», - ըսաւ ԼՀԿ ղեկավարը:

«Նաեւ ժողովուրդը կը գնահատի էր ուժերի պահուածքը, թէ ով, ոնց իրեն պահեց էն ժամանակ, երբ որ թշնամին մտել էր Հայաստանի Հանրապետութեան տարածք: Թշնամու՝ Հայաստանի Հանրապետութեան տարածք մտնելն օգտագործում էր իր սեփական շահերը սպասարկելու՝, ձայն հաւաքելու համար, թէ՛ ուղղակի բոլոր իր հարցերը դրել էր մի կողմ՝ կեղտոնացած էր պետական շինարարութեան գործի վրայ: Սրանք կարելուր բաներ են, ես վստահ եմ, մարդիկ հետեւում են, մարդիկ գնահատում են էս ամէն ինչը, նայում են՝ ով, ինչ է ասում, չի ասում», - ընդգծեց Մարուքեան:

Ընտրակաշառք Առաջարկելու Եւ Տալու Համար Մեղադրանքներ Առաջադրուած Են

Երեւանի բնակիչ Վ.Վ.-ն Շ.Դ.-ի հետ նախնական համաձայնութեամբ ԱԺ-ի արտահերթ ընտրութիւններուն մասնակցող կուսակցութիւններու դաշինքի օգտին կողմ քուէարկելու համար, նոյն վարչական շրջանի խումբ մը ընտրողներու, Յունիս 3-էն 11-ի ժամանակամիջոցին առաջարկած եւ տուած է տարբեր չափերու կաշառք, հաղորդած է Յատուկ քննչական ծառայութիւնը (ՅՔԾ):

3-ը կալանաւորուած են: Կասկածեալի կարգավիճակ ունի 9 անձ:

Ըստ նոյն աղբիւրին՝ այս երկու անձերը երէկ՝ Յունիս 14-ին ձերբակալուած են: Անոնց մեղադրանք առաջադրուած է խմբով, նախնական համաձայնութեամբ ընտրողներուն կաշառք առաջարկելու եւ տալու համար: Միջնորդութիւն ներկայացուած է դատարան անոնց նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու համար:

Արտահերթ ընտրութիւններու կապակցութեամբ գլխաւոր դատախազութեան ներս ստեղծուած աշխատանքային խումբի կողմէ նախընտրական շրջանի հետ կապուած Յունիս 14-ի տուալներով ստացուած եւ ուսումնասիրուած է ենթադրեալ ընտրական իրաւախախտման վերաբերեալ ընդհանուր 140 հաղորդում եւ անգանգ:

ՅՔԾ-ն յիշեցուցած է, որ այս քրէական գործով եւս մէկ անձ ունի կասկածեալի կարգավիճակ, իսկ նախաքննութիւնը կը շարունակուի: Ընտրակաշառքի ղէպերու առթիւ յարուցուած եւ Յատուկ քննչական ծառայութիւն քննուող 3 քրէական գործերու ծիրէն ներս մեղադրանք առաջադրուած է ընդհանուր առմամբ 5 անձի, որոնցմէ

Դատախազութեան հաղորդած են, որ հաղորդումներով ներկայացուած առերեւոյթ յանցաւոր իրաւախախտումներէն 86-ը կը վերաբերին ընտրակաշառք տալուն, 9-ը՝ ընտրական իրաւունք իրագործելու խոչընդոտելուն, 24-ը՝ նախընտրական քարոզչութիւնը խոչընդոտելուն, իսկ 19-ը այլ բնոյթի են:

Նշուած քրէական գործերէն երկուքով 10 անձի առաջադրուած են մեղադրանքներ, որոնցմէ 2-ը հանդիսացած են ընտրութիւններուն մասնակցող քաղաքական տարբեր ուժերու պատգամաւորութեան ցուցակներուն մէջ ընդգրկուած թեկնածուներ, հաղորդած է գլխաւոր դատախազութեան լրատուականը: Նշուածներէն 3 անձի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

Մայր Աթոռն Արձագանգած Են Փաշինեանի Յայտարարութիւններուն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինէն արձագանգած են «Հայ Առաքելական Եկեղեցոյ Հասցէին» Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանի հնչեցուցած մեղադրանքներուն:

խանութիւնների կեցուածքի, շարունակելու է անշեղօրէն իրականացնել հոգեփրկչական եւ ազգապահպան իր առաքելութիւնը հայ ժողովրդի կեանքում», - ըսուած է Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի հաղորդագրութեամբ:

«Նախընտրական քարոզարշախի շրջանակներում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինեանը շարունակում է յանիրաւի մեղադրանքներ հնչեցնել Հայոց Եկեղեցու Հասցէին:

Յիշեցնենք, որ Փաշինեան ընտրարշախի ծիրէն ներս 12 Յունիսին Սեւանի մէջ ելոյթ ունենալով մասնաւորապէս յայտարարած էր, թէ հոգեւորականները ամէն ինչ ըրած են, որ ձախողի լեղափոխութիւնը: «Մեզ ասում են, թէ մենք փորձում ենք վարկաբեկել Հայ Առաքելական Եկեղեցին, աւանդական արժէքները, ո՛չ, այդ արժէքները վարկաբեկում են քոռումփացուած հոգեւորականները: Այսօր Հայ Առաքելական Եկեղեցու կան բազմաթիւ ազնիւ հոգեւորականներ», - ըսած էր վարչապետի պաշտօնակատարը:

Եկեղեցու եւ ազգային-հոգեւոր արժէքների հանդէպ ներկայ իշխանութեան վերաբերմունքը մեր ժողովրդին յայտնի է: Այս համաթեքսթում պէտք է դիտարկել վարչապետի պաշտօնակատարի կողմից Եկեղեցու եւ Եկեղեցականների նկատմամբ դրսեւորուած վարքագիծը:

Հայոց Եկեղեցին, հակառակ ամէն տեսակ խոչընդոտի եւ իշ-

Միքայէլ Մինասեանը Կալանաւորելու Որոշում Կայացուած Է

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը բաւարարած է նախաքննական մարմնի միջնորդութիւնը՝ Սերժ Սարգսեանի փեսայ, վատիկանի մօտ ՀՀ նախկին դեսպան՝ Միքայէլ Մինասեանը կալանաւորելու վերաբերեալ: Ilurer.am-ի հարցին ի պատասխան՝ տեղեկութիւնը հաստատեց ՀՀ գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեան:



Սերժ Սարգսեանի փեսայ, Միքայէլ Մինասեան

Պետական Եկամուտներու կոմիտէին ներս յարուցուած քրէական գործով մեղադրեալ Մինասեանի նկատմամբ խափանման միջոց ընտրուած է կալանքը: Յիշեցնենք, որ Մինասեան որպէս մեղադրեալ ներգրաւուած է Պետական եկամուտներու կոմիտէի քննչական վարչութիւնը քննուող քրէական գործի ծիրէն ներս՝ ապօրինի հարստացման, փողերու լուացման եւ յայտարարագրով կեղծ տուեալներ ներկայացնելու համար:

Մինասեան կը գտնուի փախուստի մէջ եւ հոնկէ տեսաերկներու միջոցաւ պայքար կը մղէ Փաշինեանի դէմ՝ շատ յաճախ տարածելով ապատեղեկատուութիւն:

«Շիրինեան-Պապաճանեան» Դաշինքը Անհրաժեշտութեան Պարագային Պատրաստ Է Դաշինք Կազմել Գործող Իշխանութեան Հետ

«Շիրինեան-Պապաճանեան» ժողովրդավարներու դաշինքը ընտրութիւններէն ետք պատրաստ է դաշինք կազմել գործող իշխանութեան հետ, եթէ անոր անհրաժեշտութիւնը ըլլայ: Դաշինքի ցուցակի առաջին համար Արման Պապաճանեան ըսած է, թէ իրենք այդ քայլին կը դիմեն յանուն պետութեան ու ժողովուրդի շահի:

րող դաշինքը փոփոխութիւններ կը խոստանայ բանակէն մինչեւ առողջապահական համակարգ, ընկերային ոլորտ, հաւատացած են, որ ամենակարճ ժամանակամիջոցի մէջ կ'ընդունեն վերացնել երկրին մէջ առկայ աղքատութիւնը: Դաշինքը այսօր՝ Յունիս 11-ին Արարատի մարզ էր:

«Հայաստանի ժողովրդավարական ապագան այլընտրանք չունի, եւ հասնելու համար այդ բոլոր խոստումների իրագործմանը, մենք պատրաստ ենք, ի հարկէ, գործող իշխանութեանը սատար լինել, եթէ անհրաժեշտ է դաշինք կազմել նրանց հետ եւ հասնել մեր պետութեան համար կենսական անհրաժեշտ այն բոլոր խոստումների իրագործմանը, որոնք համարում ենք երկրի համար զոյգբանական», - ըսաւ Պապաճանեան:

«Ամօթ է, որ Հայաստանը 21-րդ դարում ունենայ ծայրայեղ աղքատութիւն, կ'անուանենք այն 5 տոկոս, կ'անուանենք այն 10 տոկոս, թէ 20 տոկոս, այսպիսի աշխատասէր ժողովուրդը 30-ամեայ պետականութեան պայմաններում չի կարող ունենալ ծայրայեղ աղքատութիւն», - ըսաւ դաշինքի անդամ Ստեփան Սաֆարեան:

«Յանուն Հանրապետութեան» եւ «Քրիստոնեայ-ժողովրդավարական» կուսակցութիւնները միաւոր-

Դաշինքին խօսքով՝ 2018-ը լեղափոխութիւն էր արդարութեան համար, բայց տեսանք՝ արդարութիւնը չվերականգնուեցաւ: Վստահ են՝ ընտրուելու պարագային՝ իրենք կ'ընդունեն վերականգնել արդարութիւնը:

ԼՈՒՐԵՐ

Հայկական Կողմը Պատրաստ է Ատրպեյճանին Տալ Բոլոր Ականապատ Դաշտերու Քարտեզները, Բայց Ոչ Միակողմանի. Փաշինեան



Ռազմագերիները ազատ արձակուելէ ետք կը վերադառնան Հայրենիք

Մի քանի օր առաջ 15 հայ ռազմագերիներ վերադարձան Հայրենիք:

Հայկական կողմը պատրաստ է Ատրպեյճանին տալ բոլոր ականապատ դաշտերու քարտեզները, խօսակցութիւններ վերադարձի մասին՝ այսօր նախընտրական քարոզչութեան ընթացքին յայտարարեց վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը, ընտրողներուն վստահեցնելով թէ քարտեզներու մէկ փոքր մասը միայն յանձնուած է Ատրպեյճանին:

«Մենք դեռ Դեկտեմբերին կառուցողական միջոցառում ստեղծելու համար փոքր-փոքր թուերով տուել ենք այդ քարտեզները: Երբ որ հասկացել ենք, որ իրենք դադարեցնում են գերիների վերադարձը, մենք էլ ենք դադարեցրել, բայց մենք պատրաստ ենք իրենց թիկունքում գտնուող բոլոր ականապատների քարտեզները տալ, բայց մեր հանրութիւնը չի հասկանալ, թէ մենք այնտեղ գերիներ ունենանալու պայմաններում ուղղակի միակողմանի վերադարձնենք», - ըստ վարչապետի:

«Մենք իրենց թիկունքում

գտնուող քարտեզները տուել ենք, բայց էլի ոչ թէ փոխանակութեան համար: Երբ որ Միացեալ Նահանգների պետքարտուղարի տեղակալն ասաց՝ դուք պատրաստ էք քայլ անել, եթէ իրենք քայլ անեն, ես ասացի՝ այո, պատրաստ ենք քայլ անել: Ինչ քայլ էք պատրաստ անել, ես ասացի, որ մենք մեր ունեցած քարտեզների մի մասը կը տանք»:

Պաշտօնական Պաքուի հաղորդմամբ՝ հայկական կողմը գերիներու դիմաց Աղզամի մէջ տեղակայուած 97 հազար ականներու քարտեզները տրուած են: Վարչապետի պաշտօնակատարը ընդդիմութեան կողմէ այս առթիւ հնչող մեղադրանքները կը նկատէ շահարկում, օրինակ բերելով Իսրայէլի իշխանութեան քայլը. «1027 մարդու բաց աթոյնում, որ մի գինուորին՝ Գիլատ Շալիթին, ազատ արձակի, եւ գործարք է տեղի ունենում: 2011 թուականին մի գինուորի դիմաց ազատում են 1027 պահեստիներ, որոնք մի մասին դատապարտել են ահաբեկչութեան համար, իսկ միւս 600-ին՝ գործողութիւնների համար, որոնք արդիւնքում մարդ է գոհուել»:

Լիբանանահայ՝ Վիգէն Իւլճեքճեան Դատապարտուած է 20 Տարուայ Ազատազրկման



Ատրպեյճանի իշխանութիւնները, խախտելով միջազգային իրաւունքի նորմերը, 20 տարուայ ազատազրկման դատապարտած են Շուշիի մերձակայքը գերեզմարուած լիբանանահայ՝ Վիգէն Իւլճեքճեանը: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ, անոր դէմ ներկայացուած էին քանի մը մեղադրանքներ, մասնաւորապէս, ահաբեկչութիւն, կազմակերպուած յանցագործութեան մէջ մասնակցութիւն եւ Ատրպեյճանի

պետական սահմանը ապօրինի հատել:

Լիբանանահայը հինգ տարի պիտի անցընէ բանտ, իսկ մնացած տարիները՝ խստացուած ռեժիմի ուղղիչ հաստատութիւն:

Յիշեցնենք, որ Վիգէն Իւլճեքճեան, ինչպէս նաեւ լիբանանահայ՝ Մարալ Նաճարեան գերեզմարուած էին Նոյեմբեր 9-ին եռակողմ համաձայնագիրը կնքուելէն ետք: Վիգէն Իւլճեքճեան, որպէս թաքսիի

ՀՀ ԱԳՆ Յայտարարութիւնը Թուրքիոյ Եւ Ատրպեյճանի Նախագահներու՝ Արցախի Բռնագրաւուած Տարածքներ Այցելելու Առթիւ

«Որպէս տարածաշրջանային խաղաղութեան եւ անվտանգութեան դէմ ուղղուած ակնյայտ սադրանք՝ խստօրէն դատապարտում ենք Յունիսի 15-ին Թուրքիոյ եւ Ատրպեյճանի նախագահների համատեղ այցելութիւնն Արցախի՝ ներկայումս ատրպեյճանական բռնագրաւման տակ գտնուող հայկական պատմական եւ մշակութային կեդրոն՝ Շուշի քաղաք:

Յատկանշական է, որ այս այցելութեանը նախորդել էր բռնի կերպով տեղահանուած հայկական բնիկ բնակչութեան կրօնական եւ պատմամշակութային ժառանգութեան աւերումը, այդ թւում՝ Արցախի դէմ թուրք-ատրպեյճանական ուժերի կողմից սանձազերծուած պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ թիրախաւորուած Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոյ մայր տաճարի սրբապղծումը եւ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած յուշարձանի ամբողջական ոչնչացումը:

Թուրքիոյ եւ Ատրպեյճանի իշխանութիւնների կողմից իրականացուող նմանատիպ գործողութիւնները, որոնք միտուած են՝ ամրագրելու Արցախի ժողովրդի դէմ ուժի կիրառման հետեւանքները,

ըր, էականօրէն վնասում են տարածաշրջանում կայունութեան հաստատման միջազգային ջանքերին եւ ամբողջովին անընդունելի են: Հայ ժողովրդի հանդէպ թուրք-ատրպեյճանական ցեղասպան սպառնալիքի չեզոքացումը հրամայական է դարձնում արցախահայութեան իրաւունքների վերականգնումը, այդ թւում՝ Արցախի Հանրապետութեան գրաւուած տարածքների ապագրաւումը եւ այդ տարածքներից տեղահանուած ազգաբնակչութեան անվտանգ վերադարձի ապահովումը:

Այս սադրիչ գործողութիւնները յստակօրէն բացայայտում են նաեւ Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ յարաբերութիւնները կարգաւորելու վերաբերեալ պաշտօնական Անքարայի եւ Պաքուի կողմից հնչող յայտարարութիւնների կեղծ եւ ապակողմնորոշող բնույթը:

Մէկ անգամ եւս շեշտում ենք, որ Արցախի դէմ թուրք-ատրպեյճանական վերջին յարձակման հետեւանքները վերացումը պէտք է իրականացուի Լեւոնալիկի Ղարաբաղի հակամարտութեան համապարփակ կարգաւորման շրջանակներում՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահութեան հովանու ներքոյ»:

ԵՄ-Ը Կոչ Ըրած է Շարունակելու Բանակցութիւնները Մինսքի Խումբի Համանախագահներու Հովանաւորութեամբ

Եւրոպական Միութիւնը ողջունած է Վրաստանի աջակցութեամբ՝ Հայաստանի եւ Ատրպեյճանի գործողութիւնները, որոնք յանգեցուցած են՝ Յունիս 12-ին Ատրպեյճանի կողմէ 15 հայ գերիներու ազատ արձակման եւ Հայաստանի կողմէ ականապատ տարածքներու քարտեզներու փոխանցման: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ, այս մասին յայտարարութիւն տարածած է Եւրոպական միութեան բարձր ներկայացուցիչ Ճոզէփ Պորելը:

«Այս գործողութիւնները կարեւոր մարդասիրական եւ վստահութեան ամրապնդման ուղղուած ժեսթեր են Պաքուի եւ Երեւանի կողմէ, որոնք, յուսանք, նոր ուղի պիտի հարթեն կողմերու միջեւ հետագայ համագործակցութեան, ի վերջոյ, բոլոր հայ պահուող անձերու ազատ արձակման, ինչպէս նաեւ տարածքներու ականապատման բոլոր առկայ քարտեզներու յանձնման համար՝ խուսափելու հետա-

գայ մարդկային զոհերէն»,- նշած է Պորելը:

Ան ընդգծած է, որ Եւրոպական Միութիւնը եւ միջազգային միւս դերակատարները աշխուժօրէն խրախուսած են այս ուղղութեամբ քայլեր ձեռնարկելը եւ յորդորած շարունակել ներգրաւուած երկիրներու միջեւ հետագայ համագործակցութիւնը այդ ուղղութեամբ:

«Մենք կը շարունակենք խթանել հակամարտութեան կայուն եւ անվտանգութեան կարգաւորումը, հնարաւորութեան պարագային իրագործելով կայունացման, յետպատերազմական վերականգնման եւ վստահութեան ամրապնդման ուղղուած միջոցառումներ, ինչպէս նաեւ կը վերահաստատենք մեր կոչը Հայաստանին եւ Ատրպեյճանին՝ վերստին ներգրաւուելու ԵԱՀԿ Մինսքի Խումբի համանախագահներու հովանիի ներքոյ առարկական բանակցութիւններուն», - յայտարարած է ԵՄ-ի բարձր ներկայացուցիչը:

Freedom House-ը Մտահոգուած է Հայաստանեան Ձարգացումներով

Freedom House իրաւապաշտպան կազմակերպութիւնը մտահոգուած է Հայաստանի ընտրական այս շրջանին, քաղաքական գործիչներու կողմէ բռնութեան եւ ատելութեան հռետորաբանութեան ահազանցող կիրառմամբ:

Ինչպէս նշուած է միջազգային հեղինակաւոր կազմակերպութեան դիմատետրեան էջին վրայ հրապարակուած հաղորդագրութեամբ, այդ գործողութիւնները բեւեռաց-

ուածութիւն ու ատելութեան խօսք կը տարածեն Լեւոնալիկի Ղարաբաղի պատերազմէն յետոյ վերականգնուող ու խորհրդարանական ընտրութիւններուն պատրաստուող երկրի հասարակութեան մէջ:

«Կոչ կ'ընենք բոլոր կողմերուն գերծ մնալու այսպիսի հռետորաբանութեան եւ ընտրական ամբողջ շրջանին հետեւիլ վարքի ժողովրդավարական նորմերուն», - ըսուած է հաղորդագրութեամբ:

վարորդ Նաճարեանը կը տեղափոխէր Բերձոր՝ այնտեղէն իր իրերը վերցնելու:

2021 թուականի մարտին, Մարալ Նաճարեան ազատ արձակուած էր եւ տեղափոխուած Լիբանան:

«Հայաստանը Յաւելեալ Ցնցումներ Չի Կրնար Տանիլ» Ընկ. Ալեքսան Բեռնարեան

Հայաստանի ընտրութիւններուն առթիւ ՄԻՀԿ Կեդրոնական վարչութեան անդամ, լիբանանահայ քաղաքական գործիչ՝ Ալեքսան Բեռնարեան պատասխանած է «Արեւելք» կայքէջի հարցումներուն:

-Ի՞նչ ակնկալիքներ ունիք Հայաստանի մէջ կայանալիք խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններէն: Գալիք եւ առաջ որպէս սփիւռքահայ, հայրենիքի խնդիրներով ապրող հայ եւ ցեղ որպէս կուսակցական գործիչ:

Յառաջիկայ 20 Յունիսին խորհրդարանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան մեր ժողովուրդի պատմութեան մէջ արտակարգ պայմաններու տակ: Երկիրը պարտուած է, պատերազմէ նոր ելած, հող կորսնցուցած ենք, հազարաւոր զոհեր ունինք, մէկ տասնեակ հազարէ աւելի վիրաւորներ ունինք, անյայտ թիւով զերիներ եւ այլ ծանր վնասներ կրած ենք: Այս բոլոր ճնշիչ պայմաններուն տակ տեղի պիտի ունենան յառաջիկայ ընտրութիւնները:

Գալով ընտրութեան ընդհանուր գաղափարին, գիտենք, որ որեւէ ընտրական գործընթաց ընդհանրապէս կը բնութագրուի երեք հանգրուաններով՝ նախընտրական քարոզարշաւի հանգրուանը, ընտրութեան օրը եւ նոր խորհրդարանի կազմաւորումն ու կառավարութեան ծնունդը: Յաճախ առաջին հանգրուանին կարելի կ'ըլլայ մօտաւոր կերպով կանխատեսել եւ քննարկել պատկերացում մը կազմել, մինչեւ իսկ կարելի է պատկերացում կազմել յառաջիկայ կազմուելիք խորհրդարանին եւ կառավարութեան մասին:

Դժբախտաբար, օրերս սկսած քարոզարշաւի հանգրուանին եղած ելույթներուն բովանդակութիւնը, հայերէն լեզուի ցած որակը, անձնական քինախառն եւ վիրաւորական խօսքերը, մինչեւ իսկ գիտեալ մենամարտի հրաւերները կը խրտչեցնեն գիտ: Տեսնելով այս տիպերը եւ քաղաքակիրթ ժողովուրդի մը անհարիր երեւոյթները եւ առաջնորդութեամբ վերը իմ նշած տրամաբանութեան վրայ, կրնամ ըսել, որ մեծ ակնկալիքներ չունիմ ընտրական ասպարէզ իջած թեկնածուներէն:

Եթէ ընտրական ուժերու ընդհանուր համայնապատկերին նայինք, այնտեղ գլխաւոր ուժերն են՝ «Քաղաքացիական պայմանագիր կուսակցութիւն»ը՝ Փաշինեանի գլխաւորութեամբ, իմ կարծիքով, ասոր կողմէն հետեւելու «Հայաստան» դաշինքը՝ Ռոպերթ Քոչարեանի գլխաւորութեամբ, որուն կրնայ հետեւիլ՝ Արթուր Վանեցեանի գլխաւորութեամբ, որ կը կոչուի «Պատիւ ունեմ», որուն իսկական գլխաւոր ղեկավարողը Սերժ Սարգսեանն է, եւ ասոր կրնայ հետեւիլ Լեւոն Տէր Պետրոսեանի «Հայ Ազգային Քոնկրէս» կուսակցութիւնը եւ այսօրուայ խորհրդարանին մէջ գոյութիւն ունեցող «Լուսաւոր Հայաստան»ը եւ «Բարգաւաճ Հայաստան»ը, իրենց ղեկավարներով հերթաբար՝ էտմոն Մարուքեան եւ Գագիկ Մառուկեան:



Այս բոլոր ուժերը որ թուարկեցի, իրենց արտաքին ընդհանուր քաղաքականութեամբ կը պատկանին այն խումբին, որ Ռուսաստանը կը համարէ Հայաստանի ռազմավարական դաշնակից: Կրնայ ըլլալ էտմոն Մարուքեանը քիչ մը առանձնացնել միւս ուժերէն, որ աւելի չափաւոր է այս ուղղութեամբ: Այս խումբին դիմաց այսօր ծառայած են մի քանի ուրիշ ուժեր, որոնք արեւմտամէտ կուսակցութիւններն են: Արեւմտամէտ ուժերու ներկայացուցիչներն են՝ Հանրապետութիւն կուսակցութիւնը՝ Արամ Սարգսեանի գլխաւորութեամբ, Շիրինեան-Պապաճանեան «Ժողովրդավարական դաշինք»ը եւ «Ազգային Ժողովրդավարական բեւեռ»ը:

Հիմա, գալով բուն հարցումին, եթէ ինծի կը հարցնէք իմ ակնկալութիւններս ինչ են, ձիշդն ասած, ես այս բոլորին մէջ իմ ակնկալութիւններս բաւարարող ոչ մէկ ուժ կը տեսնեմ:

Եթէ իշխանութեան պիտի գայ Քոչարեանը՝ իր խումբով, մենք գիտենք, որ Քոչարեանը կը պատկանի այդ հին իշխանութեան, որ Հայաստանը հասցուց այստեղ, որուն վզին եւս կը բարդանայ այս պատերազմին պատասխանատուութեան որոշ մասը, նաեւ բոլորս գիտենք Քոչարեանի իշխանութեան ժամանակաշրջանին տեղի ունեցած քաղաքական սպանութիւնները, փտածութիւնը՝ արեւելահայերէնով ըսած «քորուփցիան», եւ մնացած մանրամասնութիւնները: Նոյն կարելի է ըսել Սերժ Սարգսեանի ժամանակահատուածին մասին, բայց այս պարագային ի հարկէ քաղաքական դաշտը շատ աւելի բարենպաստ էր, սակայն փտածութիւնը գլուխը առած գացած էր: Այսինքն, փտածութեան իմաստով, հիները՝ ըլլայ Սերժ Սարգսեանը, Ռոպերթ Քոչարեանը եւ ինչու չէ նաեւ, Լեւոն Տէր Պետրոսեանը, Հայաստանին փրկութիւն չեն կրնար բերել: Գալով Նիկոլ Փաշինեանին, ան իր երեք տարուայ իշխանութեան ժամանակահատուածին իր տուած խոստումները չկրցաւ կատարել, այո՛, կարելի է ըսել որ մասնակի յաջողութիւններ ունեցաւ՝ կաշառակերութիւնը զսպել եւ այլն, բայց անդին չկրցաւ կառուցել ամուր պետութիւն մը, չկրցաւ

երկրի արտաքին քաղաքականութիւնը ճիշդ տնօրինել եւ, վերջ ի վերջոյ, պատերազմ պարտուած վարչապետ մըն է: Եւ գալով վերջին խմբակին, որ արեւմտամէտ խմբակն է, այս խմբակը ոչ միայն ռազմավարական դաշնակից չի նկատեր, այլ նաեւ կը նկատէ Հայաստանին թշնամի երկիր կը համարէ Ռուսաստանը: Անոնք նաեւ Հայաստանի բոլոր դժբախտութիւնները կը վերագրեն Ռուսաստանին եւ Ռուսաստան-Թուրքիա փոխարարութիւններուն, եւ կը գտնեն, որ մեր պատերազմին պարտուելու պատճառը Ռուսաստան-Թուրքիա գործակցութիւնն է, եւ բնականաբար կը մերժեն բոլորին՝ Նիկոլ Փաշինեանին եւ մնացած բոլոր ուժերուն:

Վերագառնալով իմ ակնկալիքներուս, ես կը կարծիք որ այս ընտրութիւնները մեր երկիրը լրիւ ուրիշ տեղ պիտի տանին, պիտի ծնի այնպիսի երրորդ հոսանք մը, որ պիտի կարողանայ միջին եզր մը գտնել, յստակ ծրագրեր ունենալ, սակայն այդպէս չեղաւ: Երբ կը նայիմ եւ կը լսեմ

քաղաքական ուժերուն ելույթները, որեւէ մէկը չեմ տեսներ այդ ակնկալիքներուն համապատասխանող:

Յաճախ ինծի կը հարցնեն, - լաւ, քու նախընտրանքդ ո՞վ է, ինչպիսի տիպար մը կ'ուզես տեսնել, - ես այստեղ պարզապէս որպէս օրինակ պիտի ըսեմ՝ Հայաստանի ղեկավար ողբացեալ Կարէն Տէմիրճեանի մակարդակին ղեկավար մը. այնպիսի ղեկավար մը, որ կարողանայ առաջնորդ ըլլալ, որ կարողանայ երկիրը այս ճգնաժամէն դուրս բերել, որ յստակ տեսլական մը ունենայ ապագայի, որ երբ որ խօսի, ժողովուրդին վստահութիւնը գրաւէ: Իմ անձնական կարծիքս այն է, որ այսօր ասպարէզ իջած ուժերը բոլորն ալ փորձուած են, բոլորն ալ իրենց հերթին շատ ժխտական կողմեր ցոյց տուած են, սակայն ի վերջոյ որոշողը մեր հայրենաբնակ ժողովուրդն է, մեր հայրենաբնակ ժողովուրդը ինքն է որ պիտի կողմնորոշուի եւ ինքն է որ պիտի ընտրէ յաջորդ խորհրդարանը:

Աւարտին, ես կը ցանկամ, որ բոլոր ուժերէն խորհրդարան մը կազմուի, ուր իշխանութիւն ըլլայ եւ ընդդիմութիւն, բայց ընդդիմութիւնը ըլլայ այնքան մը ուժեղ, որ իշխանութիւնը տասը եւ չափէ մէկ գործէ: Այսինքն ըլլայ այնպիսի ընդդիմութիւն մը, որ կարողանայ լաւ վերահսկել իշխանութիւններուն գործը: Ի վերջոյ մեր երկիրը, մեր պետութիւնը յաւելեալ ցնցումներ չի տանիր, իր առջեւ ունի շատ ծառայած խնդիրներ՝ գերիներու հարց, սահմաններու խնդիր, Ղարաբաղի չլուծուած հարց: Այսինքն, գալիք իշխանութիւնը այնպիսի լուրջ իշխանութիւն մը պէտք է ըլլայ, որ մեր ժողովուրդի այս անկիւնադարձային եւ շատ դժուար ժամանակահատուածին կարողանայ այս ալեկոծ ծովուն մէջէն նաւարկել եւ Հայրենիքի նաւը խաղաղ ափեր հասցնել:

Փաշինեանի Քարոզարշաւը Հասաւ Սիւնիք

Շարունակուած էջ 1-էն

խտեսուածներուն: Ան այցելեց Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսեան, Գորիս եւ այլ բնակավայրեր:

«Կը կտրենք Սիւնիքը մնացած Հայաստանից հակադրելու փորձ ընող ամեն մէկ ձեռք»

Սիսեանի մէջ Նիկոլ Փաշինեանի ելույթը սկսաւ ընդդիմադիր քաղաքացիները լիչելով՝ առանց անուններ հնչեցնելու:


Ձեռքին կրկին պողպատեայ մանտաթը խորհրդանշող եռագոյնով մոլորճնը, ան սպառնաց եւ դարձաւ Սիսեանի համայնքապետարանի ուղղութեամբ: «Մենք շատ շատ տեղերից, ներառեալ այստեղից այ սրանով հանելու ենք էդ ժանգոտած մեխերին, տարբեր քաղաքապետարաններում ծուարած դուրսպրծուկներին»:

Սիսեանի, Գորիսի, Կապանի քաղաքապետերը ամիսներ առաջ պահանջած էին Փաշինեանի հրաժարականը, իսկ անոնց համակիրները երկու անգամ խոչընդոտած էին Փաշինեանի այցը Սիւնիք: Արտահերթին ընդդիմադիր քաղաքապետերը կը մասնակցին Ռոպերթ Քոչարեանի առաջնորդած

«Հայաստան» դաշինքի ցուցակով: Իշխող ուժի վարչապետի թեկնածուն յայտարարեց, թէ ընդդիմութեան ներկայացուցիչները փորձած են Սիւնիքը հակադրել Հայաստանին. «Սիւնիքը Հայաստան է այնքան, որ քան Երեւանը, որ քան Գիւմրին, որ քան Լոռին, որ քան Տաւուշը, եւ մենք կը կոտորենք եւ կը կտրենք Սիւնիքը մնացած Հայաստանին հակադրելու փորձ անող ամէն մի ձեռք, ամէն մի ձեռք»:

Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ նաեւ Մայիս 12-էն ի վեր Հայաստանի սահմանը Գեղարքունիքի եւ Սիւնիքի ուղղութիւններով հատած ատրպէյճանցի զինուորականներուն եւ սահմանային իրավիճակին: Համոզուած ըսաւ, թէ ատրպէյճանցի զինծառայողները պէտք է դուրս գան Հայաստանի սահմաններէն, աւելցնելով, որ այդ տեսակէտը կը պաշտպանէ ողջ միջազգային հանրութիւնը. «Մահամանային կէտերի երկայնքով պէտք է տեղակայուեն ռուս սահմանապահները ներկայացուցիչներ, նաեւ միջազգային դիտորդներ չհովանու ներքոյ պէտք է տեղի ունենայ Սոթքից խոզնավար սահմանային կէտերի ճշգրտում եւ սահմանների սահմանազատում եւ սահմանազոծում»:

Ժողովրդավարութիւն Թե՛ Մենատիրութիւն



ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Մեր այս խորհրդածուծութիւնները կարելի էր նաեւ խորագրել «Փաղափարամարտ թէ՛ Մենամարտ», մեկնելով Ռոպերթ Քոչարեանի այն առաջարկէն, որ փոխան բանավէճի, մենամարտի կը հրաւիրէր Նիկոլ Փաշինեանին: Այս առաջարկին ընդմէջէն ի յայտ կու գայ 30-ամեայ անկախ Հայաստանի պետականութեան անկայունութիւնն ու խոցելիութիւնը, ուր փոխանակ ժողովրդավարութեան եւ օրէնքի գերակայութեան սկզբունքներուն կիրառումով մեր հարցերը լուծելու, կը գերադասուի մենատիրական քմահաճ մտեցումը: Մեր համոզումով՝ առաջինին պարագային միայն կարելի կ'ըլլայ լաւագոյնս արժեւորել մեր համազգային ներուժը, մինչ երկրորդի պարագային կարելի կ'ըլլայ մենատիրութեան եւ անհատ օլիգարխներու քմահաճութիւնը: Առաջինը կը նպաստէ պետական հիմնարկներու ամրակայման, մինչ երկրորդը կը խախտէ անոնց հիմքերը: Առաջինը կը նպաստէ պետականութեան երկարաժամկէտ շահերու ամրապնդման, մինչ երկրորդը կը նպաստէ անհատներու անմիջական շահերուն, որոնք կրնան հարիւր չըլլալ երկրի շահերուն: Հոսկէ մեկնելով յստակ կը դառնայ, որ անոնք որոնք դէմ են հրապարակային բանավէճերու եւ քննարկումներու կայացման, դէմ են երկրէն ներս ժողովրդավարութեան զարգացման:

Աշխարհի պատմութիւնը լիքն է պետութիւններու օրինակներով, մեծ թէ փոքր, որոնք շարաշար տուժած են մենատիրական իշխանութիւններէն, որովհետեւ ժողովուրդի լայն խաւերը հեռու մնացած են երկրի ընդհանրական շահերուն նպաստելու գործընթացէն: Երբ առիթը ներկայացած է իրենց, բերելու իրենց ներդրումը, ընդօ-

րինակելով մենաշնորհեալ դասակարգի վարքը, իրենք ալ աւելի հակամէտ եղած են կողոպուտի, քան՝ կառուցումի: Փաստացի տուեալ է, որ երբ որեւէ երկրի քաղաքացիներ կ'առաջնորդուին միայն իրենց անհատական անմիջական շահերով, այդ երկիրը դատապարտուած կ'ըլլայ փլուզման: Արդի պատմութեան մեծագոյն օրինակներէն մին Սովետական Միութեան փլուզումն էր: Բայց դժբախտաբար տակաւին կան դեկավրներ, որոնք չհասկնալ ձեւանալով այս իրողութիւնը, կը յամարին ընթանալ նոյն ճամբով: Եւ ինքզինք Հայաստանի «միակ տղամարդը» համարող Ռոպերթ Քոչարեանը ասոնց լաւագոյն օրինակն է: Արագ ակնարկ մը իր իշխանութեան տասը տարիներուն վրայ բաւարար է տեսնելու համար այն ահաւոր վնասը, որ ան հասցուց մեր պետականութեան, սկսած սահմանադրական խախտումներէն ու ընտրակեղծիքներէն, անցնելով երկրի ռազմավարական արժէք ներկայացնող հիմնարկներուն օտարին յատկացումով, երկրի հարստութեան յափշտակմամբ՝ իր եւ իր շրջապատի հարստացումով, հասնելու համար իր ընդիմախօսներուն տէնօրին՝ Հոկտեմբեր 27 եւ Մարտ 1: Մեզի համար զարմանալին այն է, որ տակաւին կան մարդիկ, որոնք թիկունք կը կանգնին իրեն, անտեսելով այս իրականութիւնները: Մեր կարծիքով, Ռոպերթ Քոչարեան կը փորձէ իր կողոպուտին մէկ մասը ծախսելով մտնել Խորհրդարան, պարզապէս ապահովելու համար տարիներու իր կողոպուտը: Որովհետեւ ան շատ լաւ կը գիտակցի, որ օրէնքի գերակայութեամբ առաջնորդուող ժողովրդավար Հայաստանի մէջ ինք ենթակայ պիտի դառնայ դատապարտման, ազատագրկման եւ իր կողոպուտած հարստութեան պետական գանձ վերադարձին: Հետե-

ւաբար, իր մուտքը խորհրդարան աւելի խոցելի պիտի դարձնէ մեր պետականութիւնը:

Անոնք որոնք մեր կրած պարտութեան պատասխանատուութիւնը ամբողջութեամբ կը վերագրեն Նիկոլ Փաշինեանին ու Թաւաշեայ յեղափոխութեան, պարզապէս կը խեղաթիւրեն իրականութիւնները եւ արգելք կ'ըլլան ժողովրդավար պետութեան մը կայացման գործընթացին, որ անհրաժեշտութիւն է, եթէ պիտի գոյատեւէ մեր պետականութիւնը: Անոնք որոնք կը ծածկեն իրականութիւնները եւ չեն նպաստեր մեր պարտութեան իսկական պատճառներուն բացայայտման, կը նշանակէ, որ անոնք նախանձախնդիր չեն Հայաստանի հզօրացման այլ միայն իրենց անձնական շահերու հետապնդման: Ռոպերթ Քոչարեան, Սերժ Սարգսեան եւ իրենց համախոհները չեն կրնար նպաստել Հայաստանի ժողովրդավարացման եւ հետեւաբար միայն կրնան վնասել այդ գործընթացին, ինչպէս կը վկայէ իրենց իշխանութեան քսանամեակը: Բոլորս պէտք է գիտակցինք այս իրականութեան եւ ըստ այնմ թիկունք կանգնինք այն ուժերուն, որոնք կրնան նպաստել Հայաստանի ժողովրդավարացման:

Դժբախտաբար, երբ կը նայինք ընտրութիւններուն մասնակցութեան գրանցում ստացած 22 կուսակցութիւններուն եւ 4 դաշինքներուն վրայ, չենք յուսադրուիր դրական ելքով: Ըստ վերջին հարցախոյզերուն, 26-ին հազիւ 10-ն կրնան հատել քուէարկողներու 1 տոկոսի սահմանը եւ ասոնցմէ միայն 2-ը կրնան հատել 5 տոկոսի սահմանը: 26-ին 10-ն ազգայնական համարում ունին, 6-ը շեշտուած ռուսամէտ են, 7-ը շեշտուած արեւմտամէտ: Աւելի քան 10-ն կեղծոյնի կուսակցութիւն կը համարուին, մինչ 5-ը աջակողմեան են, իսկ 2-ը ձախակողմեան: Այս բոլորէն մէկ բան յստակ կը դառնայ՝ անձնական միտումներու եւ շահերու վերադասութիւնը, ի հեռու գաղափարի շուրջ համախմբուածութեան եւ ազգային շահին: Եթէ այս 26-ն իսկապէս հետամուտ ըլլային մեր ազգային շահերու հետապնդման, ապա պիտի համախմբուէին գաղափարներու հիման վրայ եւ պայքարը պիտի ընթանար առաւելագոյնը 3-4 հիմ-

նական կուսակցութիւններու միջեւ:

Ու ամբողջ եօթանասուն տարի հայրենակերտիչ եւ ազգանուէր Աղասի Խանջեաններ, Ալեքսանդր Թամանեաններ, Եակով Զարոբեաններ եւ Կարէն Դեմիրճեաններ շինեցին ու շինցուցին մեր Հայաստան անուն՝ համայնավարութիւն խաղալով Սովետ Միութեան սեղմող, բայց պահող բազուկներուն մէջ:

Ու ազգի ազատութեան համար գոհուողներ Արցախի ազատութեան պայքար մղեցին եւ մեր ոտնակոխուած արժանապատուութիւնը վերականգնեցին: Ու



եղան մարդիկ, որ այդ վերականգնած արժանապատուութիւնը ՄՍԽԵՑԻՆ ինքնասիրութեան ու ընչաքաղցութեան մեղքով, եւ Քասաներու ու անոնց հետեւորդ քսան հազարներու գոհողութեան սեղանին վրայ ինջոյքներ սարքելով՝ պղծեցին անոնց յիշատակը, ազգասիրութեան ու հայրենասիրութեան սին կոչելով մեզ օրօրեցին եւ մեզ բերին Արցախի այս ամօթալի պարտութեան եզրին:

Հիմա ազգային փրկութեան կանչելով մեզ օրօրել ուզողները շուկայ իջած են նոր օրօրոցներով քնացնելու մեր ժողովուրդը: Փարամագի եւ իր նահատակ ընկերներուն նախկին հեռատես խորհուրդին օրինակով մարդոց պէտք ունի մեր ժողովուրդը, որ գիտակցի, թէ Ռուսին հետ գործակցելու եղանակը անոր «գրպանը դրուած ըլլալու» դաշնակցութեան մէջ չի կայանար, այլ անոր սեղանակից ըլլալով՝ մերժել անկէ փշրանքներ ստանալու ստորնացումը: Մեր ժողովուրդը պէտք ունի ազատամիտ մարդոց, որոնք այդ ազատութիւնը սակայն չեն գործածեր քանդելու Հայ-Ռուս հայրենապահ գործակցութիւնը: Մեր ժողովուրդը պէտք ունի մարդոց, որոնք

լիբանանցի մեծ փիլիսոփայ Ժպրան Խալիլ Ժպրանի խօսքով՝ «չեն ապրիր անցեալի տուններուն մէջ»:

Հայրենի ժողովուրդը իր գիտակից երիտասարդութեամբ չեղափոխութիւն յաջողուց՝ խուճ մը մը մարդոց բունատիրութեան եւ անփութութեան չդիմանալով, երբ չէր «մնում ելք ու ճար»: Սարդարապատէն ետք, մեր ժողովուրդը ներկայիս պէտք ունի նոյն այդ համազգային ոգիով գործող մարդոց, որոնք գիտեն ուղղուիլ պայծառամտութեամբ եւ իմաստութեամբ՝ որոշելու համար, թէ ինչպէ՛ս կը յաջողցուի ապահովութիւնն ու անդորրութիւնը Արցախի եւ մեր հայրենիքին:

Ամբոխավարական եւ փանջունիական լողուններէն պէտք չէ խաբուի մեր ժողովուրդը եւ յաջորդ ընտրութիւններուն պէտք է գիտնայ ընտրել ՔՍԱՆՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ գործող պայծառամիտ մարդիկ, որոնք գիտեն զանազան բարին չարէն եւ լաւը գէշէն: Ուղղուինք պայծառամիտ մարդոցնով, որպէսզի նոր արկածախնդրութիւններու գոհը չդառնանք մեր ազգի ճակատագրական այս օրերուն:

Հնչակեան Քսան Հերոսներու

Շարունակուած էջ 1-էն

լոյս տեսան Քսաններուն ու անոնց պարագլուխ՝ Փարամագին նուիրուած գիրքեր ու վաւերագրական ժապաւեճներ: Մի քանի տարի առաջ, երբ Թուրքիա եւս կը բոլորէր կարճատեւ իր «ազատութիւններու գարունը», Պոլսոյ մէջ ու այլուր սկսան Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչումները: Այդ օրերուն Պայազիտի հրապարակ վերադարձան նաեւ Քսաններուն հոգիները ու Թուրք մտաւորականներու նախաձեռնութեամբ՝ նոյն վայրին վրայ նշուեցաւ անոնց նահատակութեան տարելիցը:

Քսաններուն ու անոնց պատկանած կուսակցութիւնը եղած են քաղաքացիները ազատութեան, արդարութեան, հաւասարութեան ու ժողովրդավարութեան: Այդ նպատակներուն համար մղուող պայքարը ժամկետ չունի ու կը շարունակուի ամէն օր ու ամէն ժամ: Այս շաբաթ Հայաստանի ժողովուրդը կը պատրաստուի ուղղուելու քուէ-

ատուփ ու պաշտպանելու իր այդ իրաւունքները՝ որոնցմէ զրկուած էր երկար տարիներ: Սակայն, նախկին կեղեքիչները ամէն ինչ կ'ընեն պատմութեան անիւր շրջելու ու վերադառնալու նախկին յոռի փառքերուն: Համոզուած ենք որ, անոնք պիտի ձախողին իրենց նպատակին մէջ, ինչպէս որ ձախողեցաւ թրքական ջարդարար պետութիւնը՝ Հայ ժողովուրդը երկրագունդի երեսէն վերացնելու իր ծրագիրներուն մէջ:

Քսաններուն դաւանած գաղափարները արդիական են բոլոր ժամանակներու եւ բոլոր իրաւազրկուած ժողովուրդներուն համար: Ամէն տարի նշելով անոնց տարելիցը կը վերանորոգենք մեր ուխտը՝ հաւատարիմ մնալու մեր նահատակներու կտակին ու գայն փոխանցել սերունդէ-սերունդ:

Փառք ու Պատիւ Հնչակեան Քսան հերոսներուն ու Հայ ժողովուրդի հին ու նոր բոլոր նահատակներուն:

«ՄԱՍԻՍ»



ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2021 AEBU Scholarship Program
 Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
 Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
 AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
 1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Հնչակեան Քսան Անմահների Ոգու Խոյեանքին

Արեգակի մեծութիւնը մայրամուտին է երեւում

ՇԱՐԼ ՎԱՐԻՆԱԿ ԱԶՆԱԻՈՒՐ

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց աստուածների մեհենաների հաւատքի տաճարները՝ նաեւ ուսման վայրեր եղել: Այնտեղ, աստուածների սպասուորներ քուրմերը, ուսուցանել էին ՏԻՐ աստուծոյ պարգեւած գիր, գիտութիւն, արուեստներ, գրել իրենց արարչական ցեղի պատումները: Հայոց աշխարհի մանուկներ, Սուրբ Մեսրոպի առաջ ծոնկի եկած, ինդրում՝ գիր ուսուցանել իրենց, այդպէս էլ հայոց աստուածների մեհենաներում ցեղի մանուկներ՝ Տիր աստուծոյ առաջ ծոնկի եկած աղաչել իր գիրը պարգեւել իրենց: Տիր աստուծոյ իմաստութիւնը նրանց հոգիներում արարման ոգի էր ծնել, այն փոխանցուել սերունդներին: Հողի մշակը իր որդիներին գիտելիքներ յառաջ ման տարել, որոնց ցեղ շատերը իրենց արարչական ցեղի իմաստութեան լոյսի ջահերը վառել աշխարհեր, աստղերին հպել, նրանց ծնունդի հէքիաթը պարգեւել աշխարհին: Զինուորներ եղել, քաջ Նահապետ Հայկի յաղթանակի «Եռանկիւնի» պաշտպանութեան հրաշավառ ուսմունքը տարել աշխարհներ, եղել զօրավարներ, մարաջախտներ, ծովակալներ, իրենց վարած մարտերում յաղթանակների փառքի պատկերները ճակատներին եկել տուն: Իրենց հոգիներում Տիր աստուծոյ պարգեւած ոգու ներշնչանքով՝ նոր գիտական ուսմունքների, արուեստների, բանաստեղծութեան լոյս ճառագել աշխարհներ:

Մի պահ խոկա՛, երեւակայութեանը թուի՛չք հաղորդիր, ո՞ր մէկ ցեղի ուրիշ մարդիկ իրենց պատանի մանչերին, ահաւոր դժուար ու վտանգներով լի ճամբաներով, իրենց աշխարհից շատ հեռու ուսման վայրեր՝ Բիւզանդիոն, Աղեքսանդրիա, յունական Աթէնք, Տրապիզոն ճամբել: Արմին-Հայ մարդիկ նման հեռու աշխարհներ ճամբել էին իրենց մանչերին, որ գիտելիքներ ամբարէին իրենց արմենական մտքերին, այն իրենց աշխարհ բերէին ցեղի պատանիներին ուսուցանելու: Ինչ գարմանալի է, Հայաստան աշխարհում մարդիկ, հազար գրկանքներով գաւակներին ուսման են տանում, հաստատ իմանալով, որ այն կարող էր համապատասխան աշխատանքի հնարաւորութիւն չընձեռէր նրանց: Այ, այդ ոգին է հասել նոր ժամանակներ, հազար դարեր գնում իրենց ցեղի յաւերժութեան հետ: Ինչ գարմանալի, Հայոց աշխարհի հողը փորելիս, «գիր» է դուրս գալիս:

Մեծ Հայ, «սեւ ոսկու» հանձարեղ արդիւնաբերող Մանթաշեան, երկու հարիւրեակից աւելի ցեղի պատանիներին ուսումնառութեան ճամբել Եւրոպական երկրներ, որ հայրենի երկիր գիտելիքներ բերէին: Ազգի բազում ուրիշ նուիրեալներ էլ Եւրոպայի տարբեր հաստատութիւններում ուսումնառութեան ճամբել պատանիներ, որոնցից շատեր ծառայել են երկրի գիտութիւնների ու արուեստների բարգաւաճմանը, իրենց տիրապետած ուսումնառութեան գիտելիքները ճամբէին մանուկներին, պատանիներին:

Թիֆլիս քաղաքի մեծահարուստ Հայ գործարարը, ուշիմ պատանի Աւետիս Նազարբէկին փարիզում ուսանելու ծախսերն էր

հոգացել: Սորպոնի համալսարանում էր ուսանել Աւետիս Նազարբէկը: Այնտեղ ծանօթացել իրեն նման յեղափոխական նկարագրի ոգի ունեցող ուսանող Մարօ Վարդանեանի հետ: Աշխարհի կարգերը փոխելու, աշխատաւոր մարդկանց ստրկութեան շղթաները փշրելու ու ազգի ազատագրական պայքարի գաղափարների նոյն ոգու կրակը նրանց հոգիները սիրող նարոտով էին կապել, ամուսնացել էին: Ժրնեւ հաստատուելով, ծանօթացել էին երկրից ուսման եկած տարեկից, ընկերային նոր գաղափարներով սողորուած եռանդուն ու խանդավառ տղաների հետ: Աւետիս Նազարբէկ, Փարիզում ուսանելու տարիներին՝ հայրենասիրական, ընկերային, յեղափոխական բովանդակութեամբ յօդուածներ հրատարակել Ֆրանսիա, Մարսիլիա հրատարակուող՝ Վանում «Արմենական» կուսակցութեան հիմնադիրներից՝ Մկրտիչ Փոթթուզալեանի «Արմէնիա» լրագրում, մարդկանց սրտերին հայրենի հողի պաշտամունք պատարագել: Աւետիս Նազարբէկ ու ընկերներ նախաձեռնել էին յեղափոխական կազմակերպութիւն ստեղծել: Ժրնեւի համալսարանի գրադարանը, քաղաքի ծանօթ սրճարանները, իր նեղլիկ բնակարանը դառնում տեղի երիտասարդների հանդիպումների ու հաւաքոյթների հաւաքատեղիներ: Իրենց մտահոգել էր ինչպիսի կազմակերպութիւն ստեղծել, որ այն կարողանար իրականացնել Հայաստանի արեւելեան ու արեւմտեան տարածքներ միաւորող, ազատ ու անկախ պետութիւն: Մտադրուել էին կազմակերպութեան գործունէութիւնը սկզբում ծաւալել Արեւմտեան Հայաստանի տարածքում, որտեղ հայերը կրում էին թուրքի դաժան տիրապետութիւնը: Նազարբէկի քաղաքական համոզմունքն էր՝ սեփական ուժերին վստահելով համագալին ապստամբութիւն իրականացնել եւ ոչ թէ Եւրոպական մեծ տէրութիւնների միջամտութեան յոյսին ապաւինել: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ էին համարել յեղափոխական կազմակերպութիւն ստեղծել: 1887 թուականի Օգոստոս ամսուայ մի երեկոյին, Նազարբէկ, Ժրնեւի իր բնակարանում ժողովի էր հրաւիրել ազգային ազատագրութեան գաղափարին նուիրեալ ընկերները, որոնց հետ համախորհուրդ հիմնել յեղափոխական կազմակերպութիւն՝ «Հնչակեան կուսակցութիւն»-ը: Աւետիս Նազարբէկ-ին կուսակցութեան «Հիմնադիր» մակդիրն էին շնորհել, սակայն այն ստեղծողներն ունէին նոյն «Հիմնադիր» անդամի յեղափոխական ու ազգային ազատագրական ոգու լուսապսակ ճակատները, ցեղի ոգու խոյեանքը, նրանք էին՝ Աւետիս Նազարբէկ, Մարօ Վարդանեան-Նազարբէկ, Ռուբէն իման-ազատ, Գաբրիէլ Կաֆեանց, Քրիստափոր Օհանեան, Գեորգ Ղարաջեան եւ Լեւոն Ստեփանեան: «Հնչակեան կուսակցութիւն»-ը, իր քաղաքական գործունէութիւնը իրականացնելու համար, Աւետիս Նազարբէկ ու Գեորգ Ղարաջեանեան կազմել էին նրա կանոնադրական ծրագիրը, որն ունէր «Մօտաւոր» ու «Հեռավոր» նպատակներ: Մօտաւոր նպատակը՝ համաժողովրդական գիտութեամբ ապստամբութեան միջոցով արեւմտա-

հայութեան ազատագրութիւնն էր: Նազարբէկ, թուրքիայում հայերի փրկութեան միակ միջոցը համարել էր յեղափոխութիւնը, որը անհրաժեշտ էր իրականացնել, հաւատալով, որ միայն զոհաբերուած արիւնը կարող էր Հային փրկել, միայն կուռում հոսած արիւնը կարող էր սարսափեցնէր բռնաւոր թուրքին: Կուսակցութեան հեռավոր նպատակը հասարակութեան ընկերային, քաղաքական եւ տնտեսական մարզերում ընկերվարական գաղափարների ներդրումն էր: Յեղափոխական կազմակերպութիւնը ու նրա գործունէութեան ծրագիրը ստեղծուած էին, անհրաժեշտ էր այն սերմանել հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ, որ մասնակիցը լինէր երկրում թուրքի գարշահոտ ախտը «Ազգեան ախոռների աղբի» նման տանել լցնելու հեղեղատներ:

Կուսակցութեան պաշտօնաթերթ հրատարակեցին, Ռուս Հերցենի լոյս ընծայած թերթի՝ «Կոլոլով» (զանգ) անունից, այն հայացնելով կնքել էին «Հնչակ» անունով: Նրա անունով կազմակերպութեան անդամները կոչուել էին «Հնչակեաններ», կազմակերպութիւնը՝ «Հնչակեան կուսակցութիւն»: Յետագային, յեղափոխական կազմակերպութիւնը որդեգրել էր՝ «Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան կուսակցութիւն» անունով: 1896 թուականին, Լոնտոնում, կուսակցութեան գաղափարախօսութեան եւ արեւմտեան Հայաստանի ազատագրական պայքարի հարցերի տարակարծութիւնների պատճառով այն պառակտուել էր երկու հոսանքների՝ «Վերակազմակերպութիւն» եւ «Ձախակողմեան-Ընկերվարական Հնչակեաններ»:

Հեռու արեւմուտքից, իրենց նախնիների երկիրը ազատագրելու ելած երիտասարդների մտքերի անդաստաններից յառնած յեղափոխութեան ոգու հովիկները, բազմած փերիների թեւերին, հասել էին Բիւզանդիոն, Արմին-հայերի աշխարհ, Ռուբինեան իշխանների չքնաղ երկիր Կիլիկիա: Բիւզանդիոնի եւ երկրի այլ բնակավայրերի ուսեսալ ու աշխատաւոր Արմին-հայեր, որոնց սրտերում Հայոց աշխարհի ազատագրական պայքարի տենչն էր բռնկել՝ մտել պայքարի շարքեր: Հազար-հազար անձնազոհ մարդիկ գէնք վերցրել, ելել երկրի ազատագրութեան կուռին: Սասունում, Զէյթունում, Շատախում, Վասպուրականում, Վանում, Շապին-Գարահիսարում, Մուսա Լեւում եւ այլուր կուռ տուռն թուրքին, սպաննեցին նրա յոխորտանքը, արիւն տեսաւ թշնամին, սարսափեց, բանակ բերեց լեռներ, շատ շատ էին: Այդպէս չի լինի ասացին, անհրաժեշտ է ամբողջ Արմինահայաստան երկիրը յեղափոխութեան խարոյկներով շառագունել, գէնքի հազար-հազար համագրկների պայթիւնների որոտներով կուռ տալ դուշմանին, ազատութեան հողմեր մոնչէին Արմին-հայերի լեռներում, հայոց պատերազմի ու յաղթանակի աստուած Վահագնի շանթերի ոգին կուռի տանէր Արա աստուծոյ արեւորդիներին: Կուսակցութեան երդուեալներ երկրի շէներ գնացին՝ Արմին-հայերին համընդհանուր յեղափոխութեանը նախապատրաստելու: Մուսա լեռան լանջերին, որպէս երկնքից ընկած աստղաբոյլեր շողշողում էին վեց Հայկական

շէներ: Նրանց բնակիչները համառու յախուռն էին, գէնքի գործածութեան վարժ, հմուտ որսորդներ ու դիպուկ նշանառուներ էին: Հայոց Տիրոսն արքայի յաղթական գորքի հետ, Հայաստանի հարաւային կողմերից եկել բնակութիւն հաստատել մուսա քոյրերի լոյսով հրավառուած լեռան լանջերին: Հնչակեան ականաւոր գործիչ Աղասին, 1890-ականների սկզբներին, 14 ընկերների հետ եկել էին Մուսա լեռան շէներ, նրանց մարդկանց նախապատրաստելու Հայաստանի ազատագրութեան համընդհանուր յեղափոխութեան կուռին: Նրանց մարդկանց սրտերին ազատագրական պայքարի ոգու խարոյկներ վառեցին, յորդորեցին պատրաստ լինել Հայոց կուռին: Հնչակեան գործիչների թուրքի դէմ ազատութեան կուռի ելնելու ոգու այդ կանչերն էին իրենց լեռներում դուշմանի դէմ մարտնչելու տենչի բոցեր վառել: Շատ անգամներ աւելի հզոր թշնամու գորքի դէմ կուռի ելել, հինգ յաղթական ճակատամարտերի լուսապսակ ճակատներով հասել հեռու ծովի ափերի փարաւոնների երկիր: «Քսան պարոններ» էին ասում նրանց, այցելել էին շէների տներ, առանձին գրոցներով յորդորել պատրաստ լինել կուռի: Աղասին այցելել էր նաեւ Եօղունսուղ գիւղի Հայկչեան Գէրնեգի տուն: Նրան պատմել, որ ազատագրուած Հայաստանում թագաւոր պիտի լինի: Գէրնեգը, գեղջուկի պարզամտութեամբ ասել էր, որ հայոց թագաւորը թող իրենց գիւղից լինէր: Աղասին հարցրել էր՝ ուր էր լինելու նրա նստավայրը, Գէրնեգը պատասխանել՝ ահա այս սենեակում, ես պատշգամբ բուծ կը քնանամ, ինքն էլ այստեղ: Իրոք որ Հայոց ազատ աշխարհում «թագաւոր թագադրեցին» Եօղունսուղի Տէր Պետրոսեան գերդաստանի ժառանգ՝ Լեւոնին:

Հնչակեանների համընդհանուր կուռի ելնելու ոգու հովիկները հասել էին նաեւ Սիւնեաց Բակուր Նահապետի աշխարհի հարաւ՝ Մեղրի գաւառ: Նրա շէնի բնակիչ Մաթէոս Սարգիսեան-Փարամազը՝ գիտուորագրուել էր Հնչակեան գաղափարախօսութեանը: Հայաստան աշխարհի ազատագրութեան կուռին մասնակից լինելու համար՝ թողել հայրենի երկրի շէն, թողել գործ ու տուն, կին, դուստր, հայր ու մայր, գնացել հրացուելու Հայոց կուռի շանթերի արավառ լոյսում: Գնացել հասել արեւմտեան կողմն հայոց աշխարհի, նրա աշխատաւոր մարդկանց ազատագրական պայքարին գորավիզ կանգնելու, այրուելու նրանց ընդվզման փոթորիկների հնոցներում:

Հնչակեան կուսակցութիւնը չէր մասնակցել 1907 թուականի Փարիզի երիտ թուրքերի «Իթիհատ վէ թերաքի» համաժողովին, ծանօթ էին նրանց հակահայ թաքուն գործելակերպին: Այդ համաժողովը նրանց առաջնորդեց թուրքեայում իշխանութեան գաւթմանը, գահընկեց արեցին Սուլթան Համիտին: Հնչակեանները չգործակցեցին երիտ թուրքերի հետ, երկրում ճանաչուեցին օրէնքից դուրս կուսակցութիւն: 1911 թուականին, Սեւանի-Յոնաստանում կայացել էր «Իթիհատ վէ թերաքի» - «Միութիւն եւ Առաջդիմութիւն» կուսակցութեան «Գորշ գայլեր»

Հնչակեան Քսան Անմահների Ոգու Խոյեանքին

Շարունակուած էջ 13-էն

ոհմակի համաժողովը: Հայութեան բնաջնջման որոշում ընդունուել: Այն պիտի իրագործուէր գալիք համաշխարհային պատերազմի ընթացքում, Թուրքիան Գերմանիայի կողքին մասնակից լինելու յաւակնութիւն ունէր: Տասնըհինգերորդ դարում իսպանիայի թագաւորութիւնը երկրից վաճակել էր հրեայ բնակիչներին: Նրանցից շատեր հասել էին յոյների երկիր: Ուրացել իրենց կրօնքը ու ծագումը, ժամանակի ընթացքում «Տէօնմէ» իսլամ թուրքեր դարձել: Ծագումով հայ եղած Նիւէրիները աւելի դաժան էին քան իրենց տէրերը, Տէօնմէ հրեաների պղտորուած արիւնն էլ աւելի դաժան եղաւ քան բուն թուրքինը: Համաժողովում նրանց ընդունած որոշումները գաղտնի չէին մնացել Հնչակեան կուսակցութիւնից: Համաժողովին մասնակցած Թուրքիայի «Իթթիլաֆ» կուսակցութիւնը, Իթթիլատի ընդունած որոշման մասին տեղեակ էր պահել Հնչակեանների ղեկավարութեանը:

1913 թուականի Սեպտեմբերի 13-ին, Ռուսիայի Կոնստանցա (Քիւստենջա) քաղաքում, գումարուել էր Հնչակեան կուսակցութեան 7-րդ ընդհանուր համաժողովը, որոշում էր ընդունուել ահաբեկել Իթթիլատական ղեկավար անձանց ոհմակը, կանխարգելելու համար գալիք պատերազմին Թուրքիայի մասնակցութիւնը ու հայերի բնաջնջման նրանց ծրագրի իրականացումը: Համագումարի ընդունած որոշման կատարումը յանձնարարուել էր իրականացնելու Փարամագին, նա համագումարին ներկայ չէր: Այն ոչ միայն Հնչակեան կուսակցութեան, այլ նաեւ հայ յեղափոխական պատմութեան ընթացքում կայացուած առանձնակի որոշում էր:

Փարամագ, Հայաստանի տարբեր շրջաններում էր, հայերին տոգորում էր ազգային-ազատագրական պայքարի, կուսակցութեանը տեղեակ պահում այնտեղ տիրող իրավիճակի մասին, որ «Իթթիլատի գուլումը չափ ու սահման չունի... հայութեան դահիճները սպասում են յարմար առիթի՝ հայոց ոչնչացման արհաւիրքը իրականացնելու համար: Պէտք չէ տնտնալ անմիջապէս հակահարուած տալու համար»:

1914 թուականի Յուլիսին Փարամագը Կոնստանդինոպոլսում էր: Նախապատրաստում էր համագումարի որոշումը իրականացնելու ձեռնարկումը: Համախմբում է Հնչակեան կուսակցութեան որոշանդամների, պարմանուհի Երանուհի Դանիէլեանին հաւաքագրում որպէս կապաւոր: Հնչակեանները չէին իմացել, որ Իթթիլատական եռեակը տեղեակ էր եղել իրենց համագումարի որոշմանը: Այդ մասին Համագումարի մասնակից՝ լրտես Արթիւր Եսեանն էր հաղորդել Իթթիլատին: Արթիւրի կեանքի ապահովութեան համար, կառավարութիւնը նրան ապաստանել էր Ադանայի բանտ: Վրիժառու հնչակեաններ գտել նրան, մահապատժի ենթարկել: Որպէս անպէտք մարդ, Ֆրանսական իշխանութիւնը կարգադրել նրա դին աղբանոց նետել:

1914 թուականի Յուլիսի 16-ին, իմբի հաւաքի հանդիպման առէն, Կոնստանդինոպոլսի ոստիկանութիւնը ձերբակալել էր Փարամագի խումբը, բոլորին կալա-

նատուն տարել: Տապալուել էր հայութիւնը բնաջնջումից փրկելու ծրագիրը: Թուրքիայի արարչական Արմին-հայերը, իրենց իսկ բնօրրանում, իրենց հաւատքի խաչի հետ խաչուեցին, արդեօք վշտից չէին ծխացել Արմինա երկրի Նեմրութ, Վարագ, Թոնտրակ, Արտոս, Սիփանի յանգած հրաբուխները ...:

1915 թուականի Մայիսի 14-ին Թուրքի պատերազմական ատեան: Դատում էին քսան բոցաշունչ ոգեղէն քաջերի, դատում էին միտք, ոգի, ազատութիւն: Դատում էին, որպէսզի մարէին նրանց գաղափարի ճախրանքը, հայրենիքի ազատագրութեան լոյսը, որ միջէր Արմինա երկրի կապուտակ երկնակաւարը: Նրանք, իրենց դրախտիկ լեռնաշխարհում բոցավառել էին ազգի ազատութեան կրակի լոյսը, հայոց աշխարհի փառքի հրաշէկ ոգու կանթեղը, որից ճառագած լոյսը շառագունել էր Ֆէտայի դարձած ռանչպարներին ու հայրենիքի ազատագրութեան գոհուելու հազար-հազարների սրտերը: Քսանների մարտաշունչ, բոցավառ տրիբուն՝ հայկազուն Հնչակեան Փարամագը արեւավառ մրրկահաւի խոչեանքով դատապարտել էր դատողներին: Դատաւորների դիմաց, քսան Հնչակեան ընկերների հետ, յաղթ կանգնել էր Փարամագը, պաշտպանական ոգեշունչ ճառ էր արտասանել:

«Ի՞նչ չըրինք մենք այս դժբախտ երկրի երջանկութեան համար: Ի՞նչ անսահման գոհողութիւններու յօժարեցանք, ինչքան եռանդ ու արիւն չսպարեցինք Հայ եւ թուրք եղբայրութեան իրականացման համար: Ինչպիսիք կանքներ չառինք փոխադարձ վստահութեամբ գիրար բարձրացնելու համար: Ու ի՞նչ տեսանք... Ոչ միայն դուք անտարբերութեամբ՝ ամլութեան դատապարտեցիք մեր ահագին ջանքերը, այլ գիտակցաբար հետամուտ եղաք մեր բնաջնջումին, մոռանալով, որ հայութեան բնաջնջուելը բուն իսկ Թուրքիոյ կործանման համագոր է: Դուք քաշակերէցիք ոճիրն ու հարստահարութիւնները ու լռեցինք ջանացիք բողոքող մէն մի արտայայտութիւն: Դուք մեր կենսահիւթով ապրեցաք դարեր շարունակ եւ երբեք չուզեցիք, որ հիւթին աղբիւրը իրաւունք ունենար ապրելու եւ արտադրելու: Դուք ճնշեցիք մեզ՝ երբ կամագուրկ ուսյա էինք եւ ողբալի համբերատարութեամբ կը հանդուրժէինք ամէն ստորացում: Դուք ահաբեկեցիք մեզ՝ երբ օր մը ուզեցինք թելմա գոյութիւն մը խնդրել մեր իշխանաւորներէն: Դուք զայրացաք երբ Արեւմտեան քաղաքակրթութեան սերմերը ուզեցին աճեցնել՝ մեր ու ձեր ապագան երաշխաւորելու: Դուք մեզ ջարդել սկսաք երբ օրին մէկը վճռեցինք մեր արժանապատուութեան համապատասխան դիրքի վրայ բարձրանալ: Դուք մեզ օրէնքի պաշտպանութեան դուրս ձգեցիք, երբ Միդհատեան պոչատ սահմանադրութեան արտօնած իրաւունքներէն օգտուելու ուզեցինք: Պարոններ՝ դատեցէք մարդիք իրենց գործերով, իրենց աւանդութիւններով՝ իրենց գաղափարական կալուածի մէջ: Ես անջատողական չեմ այս երկրի հանդէպ, ընդհակառակը, ինքն է որ կ'անջատուի ինձմէ, չկարենալով հաշտուելի գիտ ոգեւորող գաղափարներուն հետ: Եւ ես կը ներեմ իրեն, առանց պահաջելու որ ինք ալ ինձ ներէ, թէեւ փիլիսոփայ մը ըսած է՝ «Լաւ է տաւը յանցաւորի

ներել, քան թէ անմեղ մը դատապարտել»: Փարամագը շարունակել էր՝ «Մենք սոցիալ դեմոկրատներ ենք, մեր հայրենիքը աշխարհն է, մեր ազգը ամբողջ մարդկութիւնն է... մենք մեր գաղափարները տարածել ենք հաւասարաչափ եւ հային եւ թուրքին, եւ ասորիին, եւ ցանկացած այլ ազգի ներկայացուցիչին:

Ատեանի վերջին նիստին նախագահողը իր ելույթում ասել էր.

«Այս դատավարութիւնը իր մէջ ունեցաւ անսովոր եւ անօրինակելի բան մը: Անօրինակելի, այո, որովհետեւ ո՛չ դուք եւ ոչ ալ մենք գիրար թափանցելու իմաստութիւնը ունեցանք... Ձէք կրնար երեւակայել, էֆենտիներ, թէ այդպիսի դատութեամբ է, որ պիտի յայտարարեմ համոզմանս խորութիւնը ձեր մէջ ամբարուած անսահման հայրենասիրութեան մասին... Ինչէր չէին կրնար ընել ձեզի պէս խանդավառ մարդիկ, եթէ հասարակական երջանկութեան տեսլականը ընդհանուր դրօշի մը տակ հետապնդուէր... Ի՞նչ բարիքներ կրնային ծնիլ խուսափող իրարահակացողութեան մը, որուն ներփակ ծայրը տխուր է եւ միջին...:

Այո, անսահման հայրենասիրութիւնը եւ նրանց դաւանած գաղափարների նուիրման վեհութիւնը միաւորել էին այդ քսան պայծառ արեւորդիներին, որոնք չընկրկեցին կախաղանի առաջ, բոլորը միասին ըմպեցին մահուան դառնագոյն բաժակը:

Պոլիս, Գում Գաբու թաղի քահանայ՝ Տէր Գալուստ Պողոսեանը խաղաղ ննջում էր, ո՛վ իմանար ի՞նչ անուշ անուրջների մէջ էր ընկողմանել, երբ տան դուռն էին թակել, շտապել էր մօտենալ, եւ ի՞նչ... ոստիկանները: Հրամայել էին հետեւիլ իրենց, յայտնել էին, որ «Պաշտօնդ կիրարկելու համար կը կանչուիք»: Առաջնորդել էին իրեն ոստիկանատուն եւ լսելով պաղարիւնութեամբ յայտնել, «Ձեր տաք գլուխներէն մի քանիներ, Հայաստանի անկախութեան ազատագրական պայքարի եւ մեծ ոճիր կատարելու ծրագրի համար դատապարտուածների մահավճիռը պիտի գործադրուի, հրաւիրել կրօնական պարտականութիւն կատարելու:

Ժամն էր տասներկու, մութն էր գրկած սուլթանների պալատները, Պոսֆորի կապուտ ջրերին սեւ էր իջել: Տէր Գալուստին առաջնորդել էին պատերազմական ատեան: Այնտեղ էին քսան հնչակեան արորդիները, այնտեղ էին ժամանել երկրի դատախազն ու այլ պաշտօնատարներ: Ատեանը, նրանց մահուան դատապարտելու վճիռն էին ընթերցել... եւ բոլորը միաբերան կանչել էին՝ «Կեցցէ Հայաստան, կեցցէ Հայաստան»: Նրանք անզօր էին սպաննելու հայու արեւալոյս գաղափարները, արեւորդիների Հայաստան աշխարհի ազատութեան արբշիռ երազանքը: Արմին հայի հանճարից յորդած շքեղագարդ պալատներ՝ Սուլթան Պալադիտի հրապարակ: Եւոտանի կախաղանափայտերն էին մահագոյժ ցցուել, փայտերից կախուած պարաններ զոհներ էին: Փարամագն էր քսան ընկերներին առաջնորդել ղէպի կախաղաններ, հանգիստ ու անվրդով կանգնել էին օղակների տակ: Հայեացքներն էին յառել երկնակաւարում վառուող աստղերին: Նրանք խնդրել էին Տէր Գալուստին սուրբ հաղորդ ստա-

նալ, հայոց հաւատքի մասունքով իրենց հոգիները պսակել Հայաստան աշխարհի ոգեղէն խորհուրդով: Իրենք էլ, որպէս գաղափարի առաքեալներ երկիրազածութեամբ համբուրել խաչը: Օննիկ Թոփուզեան խօսքը Տէր Գալուստին ուղղելով ասել էր՝ «Տէր Հայր, տուր այս չոր թաշկինակը մօրս եւ ըսէ, որ այն երբեք թըջուած չէ արցունքով»:

Առաջինը կախաղանի օղակին մօտեցել էր Փարամագը իր կտակի թուղթն է յանձնել՝ «Հայը մեռնում է կաթիլ առ կաթիլ: Փոխանակ կաթիլ առ կաթիլ մեռնելու եւ անհանալու, հայը մի անգամ եւս պիտի մեռնի, որ հայը ապրի: Դուք մեր մարմինները կրնաք կախել, իսկ մեր գաղափարը, ո՛չ: Հոն ուր կախաղաններն են ձօճուած, ազատութիւնն է մահ գալիս, հոն ուր մեռելներն են ննջում յարութիւնն է մօտալուտ: Մեր գողգողները Նազովրեցիի Գողգոթային աւելի վսեմ եղան, մեր խաչը Օժեանի խաչէն աւելի ծանրագոյնը եղաւ, բայց մեր յաղթանակները գերագոյնը պիտի ըլլան յաղթանակներուն»: Նրա վերջին կոչականն էր՝ «Դուք վաղը պիտի տեսնէք արեւելքի հորիզոնի վրայ Սոցիալիստական Հայաստանը»:

Տօքթոր Պէննէ յախուռն կանչով ազգարարել «Դուք մեզ քսաններիս կը կախէք, բայց իմացէ՛ք քսան հազարներ պիտի հետեւին մեզի»:

Իրենց տրուած ճերմակ շապիկներն էին հագել, հրեշտակների թեւերին բազմած ճերմակ հագուստով, իրնց յաւերժութեան ճամբաների երթով թռչելու իրենց Հայկ Նահապետի համաստեղութիւն: Տէր Գալուստը իր պարտականութիւնը կատարելուց յետոյ կանգնած մնացել կառափնատեղիում հոգիով մարտիրոսանալու նրանց հետ: Ապա ընկերացել է նահատակների դիերին, գնացել Գում Գաբու գերեզմանատուն կատարելու նաեւ նրանց թաղման կարգը: Անմիջապէս գնացել Պատրիարքարան, Զաւէն Պատրիարքին տեղեկացնելու եղեռնագործութեան մասին մանրամասները:

- Փարամագ
- Երուանդ Թօփուզեան,
- Մինաս Քէչիչեան
- Յակոբ Պասմաճեան
- Տօքթ. Պէննէ
- Հրանդ Եկաւեան
- Վահան Պոյաճեան
- Աբրահամ Մուրատեան
- Վանիկ
- Թովմաս Թովմասեան
- Գարեգին Պողոսեան
- Երեմեա Մանանեան
- Արամ Աչքբաչեան
- Յակոբ Գազազեան
- Պողոս Պողոսեան
- Արմենակ
- Մկրտիչ Երէցեան
- Յովհաննէս Եղիազարեան,
- Գառնիկ Պոյաճեան,
- Պիթիւսցի Պետրոս

Տէր Գալուստ Պողոսեանը, ուղեկցող նամակով էջմիածնի վեհափառ Հայրապետին էր ուղարկել այն խաչը, որ քսանները համբուրել էին կախաղան բարձրանալուց առաջ: Այն տուփը, որ պարունակում էր խաչը պահպանուած է վեհափառի անձնական պահարանում: Այդ խաչը դեռ տաք է քսանների շրթների ջերմից, եթէ հոգու երկիրազած ակներով նայէիք նրան, այնտեղից պիտի յառնէր

ՄԱՅԱՁԴ



ՀՌԻՓՄԻՄԷ ԱԲԳՐԵԱՆ (Ծնեալ Սեպտեմբեր 23, 1943)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին Հիփոփսիմէ Աբգարեանի մահը որ պատահեցաւ Հինշաբթի, Յունիս 3, 2021ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան Տան Կարգը Տեսակցութիւն Երկուշաբթի Յունիս 21, 2021 երեկոյեան ժամը 6:00ին Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, իսկ թաղման արարողութիւնը Երեքշաբթի Յունիս 22ին, ժամը 1:30ին Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ: Հոգեճաշ պիտի մատուցուի Raffi's Banquet սրահին մէջ 3887 East Sierra Madre Blvd, Pasadena CA:

- Սգակիրներ՝
Զաւակները՝
Տէր եւ Տիկ. Վրէժ եւ Արմիկ Թոմպուլեան
Տէր եւ Տիկ. Արա եւ Սեդա Պոյաճեան
Նանօ Պոյաճեան
Թոռները՝ Սինթիա եւ Սիլվիա Թոմպուլեան
Մանօ եւ Սիմոն Պոյաճեան
Քոյրը Թերեզ Էօրնէքեան
Քրոջ զաւակները Բաթրիսիա եւ Մանօ Էօրնէքեան
Ժագ եւ Նաթալի Նասիֆ
Ֆատի եւ Գարօլին Շուքէր
Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Արցախի պատերազմին զոհուած ազատամարտիկներուն զաւակներուն հիմնադրամին (Children of Our Fallen Heroes Fund):

ՄԱՅԱՁԴ



ՆԵՒՐԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ (Ծնեալ 15 Յունիս 1933, Պէյրութ)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ, խնամիրին եւ հարազատին՝ Նեւրիկ Մելիքեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 8 Յունիս 2021-ին, արտի անհանգստութեան պատճառով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 18 Յունիս 2021-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Փասատինայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ, որմէ ետք թաղման կարգը պիտի կատարուի Mountain View գերեզմանատան մէջ, Փասատինա:

- Սգակիրներ՝
Դուստրը՝ Տէր եւ Տիկին Հրաչ եւ Հուրի Թաթլեան եւ զաւակները՝ Գառնի եւ Նայիրի
Որդին՝ Տէր եւ Տիկին Սիմոն եւ Արշօ Մելիքեան եւ զաւակները՝ Տիգրան, Շիրազ եւ Հայկ
Որդին՝ Տէր եւ Տիկին Վազգէն եւ Սօսի Մելիքեան եւ դուստրը՝ Սիլա
Քոյրը՝ Տիկին Ազնիւ Բժոժեան եւ զաւակները (Լիբանան)
Տալը՝ Օրդ. Վեհանուշ Մելիքեան (Լիբանան)
եւ համայն Մելիքեան, Թաթլեան, Բժոժեան, Մելքոնեան, Ազատեան, Գազանճեան, Նամրուտ ընտանիքներ եւ հարազատներ:

Հնչակեան Քսան Անմահների Ոգու

Շարունակուած էջ 14-էն

Նրանց արեւափառ լոյսը, իսկ եթէ անէացած նայէիք պիտի տեսնէիք աստղային ժպիտներով քսանների արեւոտ դէմքերը:

Ես, Մոուսաների լերան շէնի տարեց այր, գիւղի լաճ դարձած գնում Եօղունուրդի Վերի Թաղի Հնչակեանների ակումբ, ինչ աղուոր է երեւակացութեան ճախրանքով տեսնել այն բոլորը որը անցել է: Մտնում բաց դռնով, դիմացի պատին լոյս է վառուում, նահատակուած քսան կախաղանների համախումբ ու առանձին պատկերներն են: Նրանց ազատութեան պայքարի լոյսը հասել էր արի մարդկանց շէներ, կռուի տարել նրանց, սպաննել դուշմանի յոխորտանք, պատուել իրենց լեռներ եկած զինուորների սրտեր: Արի մարդկանց պայքարի ոգին էր յաղթանակել: Դրօշակ էր քսանները գլխավերեւ, փշրուած շղթաները կարծես դեռ օրօրում էին քաջերի զարկից: Լեռնականի հպարտ սրտով պատմում էին, որ հեռու երկրի հնչակեան մտաւորական, ազգային յանդուգն գործիչ՝ Տիրուհին էր Մուսա Լեռ այցելութեան ատեն քսանների պատկերները ու խոշոր գունաւոր դրօշակը նուիրել շէնի Հնչակեան ակումբին: Եօղունուրդ գիւղի հնչակեան ղեկավարներ՝ Յովհաննէս (Վէնիս) եւ Յակոբ եղբայրներն էին նրան այցելութեան հրաւիրել: Պատին էր նաեւ Մեծն Արփիար Արփիարեանը, զարմանալով նախում մօրուքաւոր ականաւոր հնչակեանին, ափսոս որ իր համախոհներով կուսակցութեան երկփեղկման պատճառ հանդիսացաւ, նրա ծրագրում թողնելու միայն «մօտաւոր» ազգային նպատակը: Պառակտուեց կուսակցութիւնը, երկու մասերի բաժանուելով տկարացաւ, ափսոս Աւետիս Նազարբէկի ջանքերին:

Քսանների դաւանած սոցիալիստական ու յեղափոխական գաղափարները նաեւ դաւանել են, իրենց մտքերը պայծառացրած ծագումով թուրք մարդիկ: Փարամագին նուիրուած գիրք են հրատարակել: Հաւաստել են, որ Փարամագն ու քսան կախաղանները երկրում առաջինը սոցիալիստական սերմեր են ցանել եւ որ նրանք երկրի սոցիալիստների ու աշխարհի համայն յեղափոխականների հերոսներն են, իրենք նրանց գաղափարախօսութեան ջահակիրներն են, եւ որ իրենց համախմբում է «Փարամագին ու քսանների աշխարհամտածելակերպի պայքարը» եւ որ ամէն տարի նրանց նահատակութիւնն են ոգեկոչում:

Քսանները, ազգին փրկելու

կռուին էին գնացել, թողած գործ, հայրենի հող, կին ու զաւակ, հայր ու մայր փարել էին ազգային ազատագրական պայքարի գաղափարական ոգու հողմերին, նետուել նրա յորձանուտ, աշխարհին աւետելու, որ Արմին-Հայց ցեղը գիտէ ազատութեան համար այրուիլ: Նրանց ճշմարտութեանը դաւեց արիական արիւնով չճառագած «սեւ հոգիով» մարդը, նրանց մեղադրեցին կղերականներ, արեւոտ մտքերով մտաւորական այրեր հաւատացին թուրքի ժպիտին: Յեղի քսան առաքեալները նրանց ասացին մի խաբուէք այդ հրէշածին մարդկանց ժպիտին, ահա նրանց իսկ ընդունած ցեղը բնաջնջելու որոշումը: Ափսոս եղաւ արարչական ցեղին, մի ոհմակի բնաջնջումը պիտի խափանէր ցեղի, երկրի բնաջնջումը, Արմին-Հայցաստան երկրի քանդումը: Նորէն յառնեց ցեղի արարչական ոգին, ստիպեց աշխարհին ընդունել, որ թուրքը ցեղ է սպաննել իրենց Արմիա դրախտիկ երկրում, պահանջում որ մեղայ կանչէր, հատուցէր գործած ոճիրը...:

Եթէ դուք բարձրանայիք Տարօն-Վասպուրական աշխարհի երկնականմարին հպած Նեմրուժ լեռան գագաթ, պիտի ապշէիք տեսնելով ոսկէփայլ լուսաշող մի նոր աստղաբոյլ, հաշուէիք նրա աստղերը, առաջին մեծութեան քսան աստղեր գիշերներին այնտեղ լոյս են ճառագում: Ազգային գիտակցութեան, ազգի պայքարի անձնագոհութեանը գնալու ցեղին սրտից ծաղկած լոյսն է այն: Այդ բոցավառ աստղերի երկնականմարում փայլատակող լոյսի շողերում Փարամագին, Պէնէի, Վանիկի ու բոլոր քսանների ստուերներն են ժպտում: Օղակ պարաններով շնչահեղձ արեցին ազնուազարմ մտքի քսան առաքեալների, մարեցին միտք, մարեցին երեւակացութեան ճախրանքի թուիչք, մարեցին սրտերի զարկեր, սակայն անզօր եղան մարելու նրանց հոգիներից ճառագած քաջ Նահապետի ոգու ջահերի լոյսը, Արմին-Հայցաստան անկախ երկրում վառուող արարչութեան լոյսը:

Հարիւր վեց տարիներ... ամէն Յունիսի 15-ին, Արմին-Հայերը քսան ընկերվար քաջերի սիրանքի գաղափարի լոյսը փառաբանում, յուշատօներ կատարում, ափսոսում նրանց մահը, եւ դեռ նրանք ինչէր չէին անելու...: Յանուն ցեղի յարատեւման պայքարի, յանուն արեւելքի հորիզոնին փայլող ազատ Հայաստանի, յանուն քսանների աստղաբոյլի լոյսի յարատեւութեանը՝ հայոց երգահանների համանուագներ հնչեն, հազար թմբուկ զարկեն:

Արեւմտեան Թեմէն Ներս

Շարունակուած էջ 11-էն

Սուրբ Էջմիածնի տօնը: Այս տօնը իւրաքանչիւր հայ քրիստոնեայի կեանքի մեծագոյն տօներէն մէկն է: Մենք բազում առիթներով մեր մաղթանքներու, քարոզներու եւ պատագամներու մէջ շեշտը դրած ենք՝ ընդգծելով Ս. Էջմիածնի խորհրդի կարեւորութիւնը մեր հոգեւոր կեանքէն ներս, բայց մասնաւոր այս օրերուն, մենք առաւել եւս պետք ունինք Լուսաւորչի տեսիլքով զգալու Աստուածորդու ներկայութիւնը՝ մեր հոգիներէն ներս, մեր հոգին դարձնելով

այն պարարտ հողը, ուր Աստուածորդին ինքը պիտի իջնէ եւ հոգեւորապէս նաեւ պայծառակերպէ, լուսակերպէ մեր կեանքը, որպէսզի մեր կեանքի ողջ ընթացքին քայլենք Աստուծոյ խօսքի համաձայն»:

Ապա Առաջնորդ Սրբազան Հայրն իր բարեմաղթանքներն ուղղեց Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ վարժարանի այս տարուան շրջանաւարտներուն, տնօրենութեանը՝ ի դէմս Բրշ. Յովհաննէս Սրկ. Գոմարոյեանի, ծնողներուն, ուսուցիչներուն եւ բոլոր ներկաներուն:

ԵՈՒՐՕ 20-ի Մեկնարկային Խաղին Իտալիա Ջախջախեց Թուրքիային

Հոռոմի «Օլիմպիկո» մարզադաշտին մէջ կայացած Եւրոպայի Ախոյեանութեան՝ ԵՈՒՐՕ 2020-ի բացման խաղին Իտալիոյ հաւաքականը ջախջախիչ պարտութեան մատնեց Թուրքիոյ ազգային խումբը՝ 3:0 արդիւնքով:

Եւրոպական տարբեր քաղաքներուն մէջ ընթացող մրցաշարքի ընթացքին, Երեքշաբթի որուայ դրութեամբ մասնակից 24 երկիրները ունեցան մեկական խաղ, որոնց ընթացքին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Կալէս-Չուրիցերիա 1:1
- Տանիմարք-Ֆինլանտա 0:1
- Պելճիքա-Ռուսաստան 0:3
- Անգլիա-Խրուաթիա 1:0
- Աւրտրիա-Հիւսիսային Մակեթոնիա 3:1
- Հոլանտա-Ուքրանիա 3:2
- Սկովտիա-Չեխիա 0:2
- Լեհաստան-Սլովաքիա 1:2
- Սպանիա-Շուէտ 0:0
- Հունկարիա-Փորթուկալ 0-3
- Ֆրանսա-Գերմանիա 1-0



Ամերիկայի Գաւաթի Մրցումներուն Արդիւնքները

Շաբաթավերջին մեկնարկեցին նաեւ Ամերիկայի Գաւաթի՝ Copa America-ի խաղերը, որոնք տեղի կ'ունենան երկու տարին անգամ մը, մասնակցութեամբ հարաւային Ամերիկայի 10 երկիրներուն:

Իրենց առաջին մրցումներուն խումբերը արձանագրեցին հետեւեալ արդիւնքները.

- Պրագիլ-Վենեզուելա 3:0
- Գոլոմպիա-Էքուատոր 1:0
- Արժանթին Զիլի 1:1
- Փարակուէյ-Պոլիվիա 3:1

Այս մրցաշարքը նախատեսուած էր, որ տեղի ունենան Գոլոմպիայի մէջ, սակայն երկրէն ներս տիրող քաղաքական անկայութեան պատճառաւ տեղափոխուեցան Արժանթին: Այս վերջինը եւս հրաժարեցաւ ընդունիլ մասնակալից երկիրները՝ համաւարակի ծանր վիճակին պատճառաւ:

Վերջին պահուն Պրագիլ յօժարեցաւ հիւրնկալել մրցաշարքը, հակառակ որ, համավարակը հոն եւս խիստ ծանր է:

Յայտնենք որ, բոլոր մրցումները տեղի կ'ունենան առանց հանդիսատեսներու:



Կրիստիան Էրիկսենը Քննուելու Նպատակով Դեռ Կը Մնայ Զիւանդանոցի Մէջ

Դանիայի հաւաքականի եւ Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Կրիստիան Էրիկսենի առողջական վիճակը կայուն է, սակայն ան դեռ կը մնայ հիւանդանոցի մէջ քննուելու նպատակով: Այդ մասին կը հաղորդէ Դանիայի ֆուտպոլային ընկերութեան մամուլի ծառայութիւնը:

Դանիայի հաւաքականի առաջատարներէն մէկի մասնակցութիւնը Եւրո-2020-ին, ամենայն հաւանակաւ նութեամբ, աւարտուած է:

Եւրո-2020-ի խմբային փուլի առաջին շրջանին Դանիայի հաւաքականը 0:1 հաշուով պարտուած էր Ֆինլանտային, 29-ամեայ Էրիկսենը առաջին խաղակէսի վերջաւորութեան կորսնցուցած էր գիտակցութիւնը: Անոր կեանքը փրկած էին սրտի անուղղակի մերսման եւ դեֆիբրիլիատորի օգնութեամբ:



«Ռոլան Գարոս». Ջոկովիչը Եզրափակիչին Յաղթեց Յիցիպասին

Աշխարհի առաջին ռակետ Նովակ Ջոկովիչի յաղթանակով աւարտեց թենիսի Ֆրանսայի բաց առաջնութիւնը:

Եզրափակիչին սերպ մարզիկը մրցեցաւ յոյն Ստեֆանոս Յիցիպասի հետ եւ առաւելութեան հասաւ երեք սեթէն՝ 6:7 (6:8), 2:6, 6:3, 6:2, 6:4 հաշուով: Պայքարը տեւեց 4 ժամ, 12 վայրկեան:

34-ամեայ սերպ թենիսիստը 19-րդ տիտղոսը նուաճեց «Մեծ սաղաւարտի» մրցաշարերուն, «Ռոլան Գարոսի» մէջ յաղթեց երկրորդ անգամ 2016 թուականէն յետոյ:

Էլմիրա Կարապետեանը Պիտի Մասնակցի Թոքիոյի Ամառային Ողիմպիական Խաղերուն

Հրաձգութեան միջազգային ֆեդերացիան պաշտօնապէս հաստատած է հայաստանցի մարզուհի Էլմիրա Կարապետեանի մասնակցութիւնը Թոքիոյի ամառային Ողիմպիական Խաղերուն: Այդ մասին կը տեղեկացնէ Հայաստանի ազգային Ողիմպիական կոմիտէի պաշտօնական կայքը:

Ան ուղեգիրը նուաճած է Խորուաթիայի Օսիէկ քաղաքին մէջ կատարուած Եւրոպայի խաղերուն: Երեւանցի մարզուհին ատրճանակի 10 մ մրցաշարին 60 կրակոցով վաստակած է 575 միաւոր, սահմանելով անձնական ու Հայաստանի նոր մրցանիշ եւ գրաւելով պատուաւոր հինգերորդ տեղը:

Յունիսի 11ի դրութեամբ Հայաստանի օլիմպիականներու հաստատուած կազմը հետեւեալ տեսքն ունի. յունահունգարական ոճի ըմբիշներ Արմէն Մելիքեան (60 կգ), Կարէն Ասլանեան (67 կգ), Կարապետ Չալեան (77 կգ), Արթուր Ալեքսանեան (97 կգ), ազատ ոճայիներ Արսէն Յարութիւնեան (57 կգ), Վազգէն Թեւանեան (65 կգ), բռնցքամարտիկներ Կորին Սողոմոնեան (52 կգ), Արման Դարչինեան (75 կգ), ծանրորդով՝ Սիմոն Մարտիրոսեան (109 կգ) եւ Իգաբէլա Եայլեան (59 կգ), սպորտային մարմնամարզիկ Արթուր Դաւթեան եւ Հրաձգուհի Էլմիրա Կարապետեան:

Օլիմպիական նորման լրացրել է նաեւ եռացատկորդ Լեւոն Աղասեանը, սակայն նրա մասնակցութիւնը դեռ պաշտօնապէս չի հաստատուել:

Ինչո՞ւ Կայացնել Թոքիոյի Ողիմպիական Խաղերը

Յառաջիկայ Յունիսի 23ին, ձաբոնի մայրաքաղաք Թոքիոյի մէջ, մէկ տարի յետաձգուելէ ետք, պիտի կայանան այնքան սպասուած նաեւ անորոշութեան մատնուած միջազգային ողիմպիական խաղերը: Արդարեւ 2020 թուականին տեղի ունենալիք մարզախաղերը յետաձգուած էին քորօնա համաճարակի պատճառով:

ձաբոնի Ողիմպիական կոմիտէի գործադիր մարմնի անդամ Քոուի Եամակուշին ապշեցուցիչ յայտարարութիւն մը կատարեց ըսելով թէ իր երկիրը կատարուած իրողութեան մը առջեւ գտնուեցաւ քորոնայի պատճառով «Այս Ողիմպիական ինչո՞ւ պիտի կայանայ եւ որո՞ւ համար է...: Խաղերն արդէն իրենց իմաստը կորսնցուցած են, պարզապէս ձեւական բնոյթ կրելու համար: Արդարեւ մենք պատահութիւնը կորսնցուցինք զայն չեղեալ նկատելով»:

ձաբոնցի բժշկական փորձագէտ մը ազդարարեց որ ամառային խաղերը կրնան քովիտի նոր ալիք մը ստեղծել եւ անբնականոն իրադրութիւն կայացնել: ձաբոնցիներու 80 առ հարիւրի փափաքն է որ Յունիսի 23ին կայանալիք Ողիմպիական խաղերը կամ յետագձուին եւ կամ չեղեալ հռչակուին: «Ասաի Շիմպուն» օրաթերթը որ գլխաւոր հովանաւորն է այս խաղերուն պետութեան առաջարկած է լքել այս նախաձեռնութիւնը: Իսկ եթէ խաղերը տեղի ունենան, ինչ որ նախատեսելի է, այդ պարագային պիտի կայանան հսկայ գումարներով կառուցուած դատարկ մարզադաշտերու մէջ:

Եամակուշիի հարցումը պարզ է՝ որո՞ւ համար Ողիմպիականը...: Մարզիկներն արդէն լայն հնարաւորութիւններն ունին միջազգային ախոյեանական տարբեր մարզաձեւերու մրցումներուն մասնակցելու: ձաբոնցի պարտաւոր չէ հեռուստատիտղոսներու գինը վճարելու: Միւս կողմէ երկրի դիւանագիտական շրջանակներու համար, թերեւս ձեռնտու երեւոյթ մըն է, ոչ թի եւ վարկի ցուցադրութեան համար:

Բան մը, որ անուրանալի է ատիկա խաղերու դրական անդրադարձն է, մասնաւորաբար համաշխարհային երկրորդ պատերազմի աւարտէն ետք: 1964ին Թոքիոյի

Ողիմպիական խաղերը հսկայական նշանակութիւն ունէին ձաբոնցիներուն համար: Ան կը խորրդանշէր ոչ միայն տնտեսական վերածաղկումը, այլեւ քաղաքական գետնի վրայ Ասիոյ մէջ միլիոնաւորներու արիւնալի մահուան պատասխանատուն եղած է, նաեւ ցոյց տալ աշխարհին բացուող ծաղիկալ ժողովրդավարութիւն մը:

Նման երեւոյթ մը պարզուած էր 1988ի Սէուլի (Քորիա) ողիմպիական խաղերուն: Հոն եւս տասնեակ տարիներ, ձաբոնական կայսերական տիրակալութիւնը, պատճառ դարձած էր քորէական պատերազմին, որմէ ետք հարաւային Քորիան յարաբերաբար ընկերային բաց քաղաքականութիւն մը ունեցաւ, դուռ բանալով ազատ մամուլի եւ լաւատեսութիւններու: Այդ իսկ պատճառով Սէուլի ողիմպիական խաղերը իսկական տօնախմբութիւն էին:

Յունաստանի նման աղքատ երկրի մը համար շատ ծանր պարտքերու տակ ճնշեց 2004ի ողիմպիական խաղերը, ուր մարզադաշտերը գրեթէ դատարկ էին: Պարագան նոյնը չէր հարուստ երկիրներու համար՝ Ադլանթի 1996, կամ Լոնտոն 2012:

2021ին Թոքիոյ իրապէս կարիքը չունէր Ողիմպիականին: Սակայն կազմակերպիչները կ'ուզէին յառաջ երթալ դրամներ կուտակելու համար: Կարգ մը երկիրներ արդէն սնանկացած են...

Ողիմպիականի Միջազգային կոմիտէն մէկ պիլիոն (միլիոն) տոլար շահած է 2004ի Աթէնքի ողիմպիականէն: Անոնք շքեղագոյն պանդոկներու մէջ եւ բլաթինիում ժամացոյցներով պճնուած կը շրջապային ամենուրեք...

Այս խաղերը առեւտուրի մեծ աղբիւր մըն է Ողիմպիական Միջազգային կոմիտէին, հովանաւորներուն, գործարարներուն եւ երբեմն ալ փոստիտաւոր քաղաքական գործիչներուն համար: ձիշո այս պատճառներով անոնք խաղաղերուն կողմնակից են: Շուտով հազարաւոր ողիմպիականի պաշտօնեաներ պիտի խճողեն Թոքիոյի արժէքաւոր հիւրանոցները, իսկ իրենց մեկնումէն ետք ոչինչի համար կառուցուած մեծ մարզադաշտերը մեծ մասամբ լքուած պիտի մնան, իրարարձուութեան մը համար, որ բնաւ տեղի պիտի չունենայ: